Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
հուլիս 21-ի նիստի N 28
արձանագրային որոշման

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

«ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներածական հարցեր

<u>Հարց1:</u> Ո՞ր պետական մարմինն է (կառույցը) պատասխանատու սույն հարցաշարի պատասխանների հավաքման և համակարգման համար: Անհրաժեշտ է նշել տվյալ պետական մարմնի (կառույցի) ղեկավարի անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը: Նշեք, արդյո՞ք տվյալ անձն է նշանակվել որպես ԳՐԵՏԱ-ի հարցերով պատասխանատու, թե՞ մեկ այլ անձ:

Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված աշխատանքները համակարգվում են Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդի կողմից, որը ղեկավարում է ՀՀ փոխվարչապետը /*մանրամասները տես հարց 9-ի պատասխանում*/:

Խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով գործում է միջգերատեսչական աշխատանքային խումբ /ԹԱԽ/՝ ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաժոյանի ղեկավարությամբ: Վերջինը հանդիսանում է նաև ԳՐԵՏԱ-ի հարցերով պատասխանատու:

ԹԱԽ աշխատանքներին ակտիվ մասնակցություն են բերում նաև ոլորտում ընդգրկված հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Սույն հարցաշարի պատասխանները նախապատրաստվել են վերը նշված միջգերատեսչական աշխատանքային խմբի և ՀՀ-ում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդի որոշմամբ ԹԱԽ-ին կից ստեղծված հատուկ ենթախմբի կողմից, որի աշխատանքը համակարգում էր ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչությունը, և որի կազմում ընդգրկված էին ԹԱԽ-ի աշխատանքներին մասնակցող հետևյալ կառույցների ներկայացուցիչները. ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ինչպես նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի <<Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն>> համատեղ ծրագրի փորձագետը:

Հարցաշարի պատասխանների նախագիծը ներկայացվել է մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդին՝ հավանություն ստանալու համար: Այնուհետև, 2011թ. հուլիսի,,,,,,, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:

<u>Հարց 2:</u> Ո՞ր պետական մարմիններն են (կառույցները) մասնակցել հարցաշարին պատասխանելու գործում: Անհրաժեշտ է նշել տվյալ պետական մարմիններից (կառույցներից) յուրաքանչյուրի հիմնական գործառույթները և (կամ) իրավասությունների շրջանակը:

Ինչպես նշված է Հարց 1-ի պատասխանում, հարցաշարի պատասխանները նախապատրաստվել են մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի /ԹԱԽ/ և դրան կից ստեղծված ենթախմբի կողմից:

Հարցաշարի պատասխանների մշակմանը մասնակցել են ԹԱԽ անդամ հանդիսացող հետևյալ պետական կառույցների ներկայացուցիչները.

<u>ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն</u>

- միգրացիոն տարբեր հոսքերի ներկայացուցիչներին (փախստականներ, ապաստան հայցողներ, Հայաստան վերադարձողներ, Հայաստանից մեկնել ցանկացողներ և այլն) իրավական-խորհրդատվական բնույթի տեղեկությունների տրամադրում:

<u>ՀՀ արդարադատություն նախարարություն</u>

- օրենսդրական բնույթի խնդիրների կարգավորում՝ այն է. ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և թրաֆիքինգին առնչվող այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների և լրացումների նախաձեռնում և իրականացում, ինչպես նաև նոր իրավական ակտերի մշակում:

<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>

ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի N1385-Ա որոշմամբ հաստատված Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգով նախարարությունը ճանաչվել է լիազոր մարմին թրաֆիքինգի զոհերի աջակցության ու դրա համակարգման հարցում:

Նախարարության կանոնադրության համաձայն, գերատեսչությունն իրականացնում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հիմնահարցերի ուսումնասիրություն, մշակում է թրաֆիքինգի ենթարկված անձանց սոցիալական վերականգնման ծրագրեր և իրականացնում է դրանց մոնիթորինգը:

<u>ՀՀ առողջապահության նախարարություն</u>

- աջակցում է թրաֆիքինգի զոհերին, տրամադրելով անհրաժեշտ անվճար բժշկական օգնություն:

- կազմակերպում է սեմինարներ առողջապահության կազմակերպիչների, բժիշկների, բուժքույրերի համար:

<u>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</u>

- կապված մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բացահայտման հետ, սահմանային վերահսկողությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով համակարգում է նոր կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի ներդրման աշխատանքները;

- բնակչության շրջանում իրականացվող ծրագրերի սոցիալ-տնտեսական ուղղվածության զարգացում. նախարարության իրավասությունների սահմաններում իրականացնում է փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանում, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության մշակում և իրականացման մոնիտորինգ, ինչպես նաև փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության տարեկան ծրագրերի մշակում:

<u>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</u>

- կրթական ծրագրերում թրաֆիքինգի հիմնախնդիրներին առնչվող թեմաների ներառումն ու իրականացում:

<u>ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարություն</u>

- կազմակերպում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման նպատակով մարդկանց շահագործման վտանգի վերաբերյալ երիտասարդության՝ որպես ռիսկային խմբի իրազեկության բարձրացմանը միտված թեմատիկ քննարկումներ, հանդիպումներ, վերապատրաստման դասընթացներ:

<u>ՀՀ ֆինանսների նախարարություն</u>

- մասնակցում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների ծրագրերի մշակմանը,
- մասնակցում է վերը նշված ընդունված միջոցառումների բյուջետավորման աշխատանքներին:

<u>ՀՀ գլխավոր դատախազություն</u>

- հսկողություն է իրականացնում թրաֆիքինգի և հարակից հանցատեսակների հատկանիշներով հանցագործությունների գործերով իրականացվող հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը: ՀՀ դատարանները թրաֆիքինգի գործերով իրականացնում են արդարադատություն:

<u>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն</u>

- Իրականացնում է թրաֆիքինգի և հարակից հանցատեսակների հատկանիշներով հանցագործությունների կանխման, կանխարգելման և բացահայտման աշխատանքներ: Թրաֆիքինգի գործերով իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն, հետաքննություն և նախաքննություն, ինչպես նաև մասնակցում է թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքականության մշակման, ազգային ծրագրով նախատեսված դրույթների կատարման աշխատանքներին:

<u>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն</u>

- Իրականացնում է թրաֆիքինգի հատկանիշներով հանցագործությունների կանխման, կանխարգելման և բացահայտման աշխատանքներ:

- Հսկիչ անցագրային կետերում իրականացնում է հատուկ հսկողություն մարդկանց թրաֆիքինգի առումով <<ռիսկային>> համարվող չվերթների, ինչպես նաև ցամաքային սահմանով մեկնող և ժամանող ուղևորների նկատմամբ:

- ՀՀ պետական սահմանի անցման կետերում իրականացնում է հարցումային աշխատանքներ ՀՀ արտաքսված քաղաքացիների հետ հնարավոր թրաֆիքինգի դեպքերի բացահայտման նպատակով:

<u>Հարց 3:</u> Արդյո՞ք որևէ հասարակական կազմակերպություն (ՀԿ) կամ քաղաքացիական հասարակության որևէ այլ սուբյեկտ մասնակցել է տվյալ հարցաշարին պատասխանելու գործում: Դրական պատասխանի դեպքում անհրաժեշտ է նշել մասնակցած ՀԿ-ներից կամ քաղաքացիական հասարակության սուբյեկտներից յուրաքանչյուրի գործունեության հիմնական ուղղությունները:

Ինչպես նշված է Հարց 1-ի պատասխանում, ԹԱԽ աշխատանքներին պետական մարմինների հետ մեկտեղ մասնակցում են նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հարցաշարի պատասխանների մշակմանը մասնակցել են ԹԱԽ-ում ընդգրկված հետևյալ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները.

<u><<Հույս և օգնություն>> ՀԿ</u>

Աջակցում է մարդկանց շահագործումից տուժողներին հասարակության մեջ ինտեգրմանը՝ ժամանակավոր ապաստարան, խորհրդատվություն, մասնագիտական ուսուցում և ուղղակի նյութական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

Նպաստում է սեռական բռնության ենթարկված անձանց, այդ թվում՝ երեխաների իրավական պաշտպանությանը, հոգեբանական և սոցիալական վերականգնմանը:

<<ԱՄՔՈՐ-ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԿ

Աջակցում է թրաֆիքինգի զոհերին՝ իրականացնելով հետևյալ գործողությունները. ապաստարանի, խորհրդատվական կենտրոնի և թեժ գծի իրագործում: Զոհերին տրամադրվում է անհրաժեշտ բժշկական, հոգեբանական, սոցիալական, իրավաբանական, ֆինանսական և վերաինտեգրման աջակցություն, իրականացվում է իրազեկության բարձրացում՝ տեղեկատվական նյութերի տպագրում և բաշխում, թեժ գծի վերաբերյալ հայտարարությունների հրապարակում ԶԼՄ-ների միջոցով, կազմակերպվում են դասընթացներ սոցիալական աշխատողների, զբաղվածության գործակալությունների և բժշկական անձնակազմի, իրավապահ մարմինների աշխատակիցների համար, ինչպես նաև պատրաստվում են հատուկ ձեռնարկներ տվյալ բնագավառի այլ մասնագետների համար:

<<Դեմոկրատիան այսօր>> ՀԿ

Սերտորեն համագործակցում է ԱՄՔՈՐ-ի հետ թեժ գծի և ապաստարանի վերաբերյալ հարցերում: Գործառույթները ներառում են նաև տեղեկատվական քարոզարշավների և իրազեկության բարձրացման սեմինարների, համայնքների հետ հանդիպումների կազմակերպում, տեղեկատվական նյութերի տարածում, զոհերիի նույնացում, աշխատանք է տանում զոհերի և նրանց ընտանիքների հետ:

<<Մարդը դժբախտության մեջ>> չեխական կազմակերպության հայաստանյան գրասենյակ

Իրականացնում է ծրագրեր, որոնք միտված են ապահովելու օգնություն և զարգացման աջակցություն, տեղեկատվական և ուսուցողական գործունեություն:

Հայ օգնության միություն

Իրականացնում է իրազեկման բարձրացմանը միտված, ինչպես նաև սոցիալական և իրավական ուղղվածությամբ կանխարգելիչ ծրագրեր:

Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա

Հակաթրաֆիքինգային գործունեության հիմնական ուղղությունը բնակչության իրազեկության, ԶԼՄ-ների մասնագիտական մակարդակի բարձրացումն է: Կազմակերպությունն հատկապես մասնագիտացված է թրաֆիքինգի թեմաներով սոցիալական գովազդի հոլովակների, ֆիլմերի, հեռուստահաղորդումների պատրաստման և տարածման ասպարեզում, ինտերնետային կայքի պահպանման և զարգացման, սեմինարների, հանրային հանդիպումների և քննարկումների պատրաստման բնագավառում:

Պատասխանների մշակմանը մասնակցել է նաև **ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի <<Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն>> (ԹՊԱՌԿ) համատեղ ծրագրի փորձագետը**:

Ծրագրի նպատակն է աջակցել պետական մարմիններին թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու, պետություն-ՀԿ բարելավված համագործակցություն հաստատելու, զոհերի իրավունքները պաշտպանելու ուղղությամբ ռազմավարություն մշակելու և արդյունավետ գործառնական մեխանիզմ ստեղծելու հարցում, ինչպես նաև աջակցություն տրամադրել ՀՀ պետական և հասարակական կառույցներին թրաֆիքինգի դեմ պայքարի համակարգումը հզորացնելու և գործառնական ենթակառուցվածքները ինստիտուցիոնալիզացնելու ուղղությամբ:

I. Կոնվենցիայում օգտագործվող հիմնական հասկացությունների և սահմանումների ներդրումը ներքին օրենսդրության մեջ

Բաժին I.1. Մարդու իրավունքների մոտեցման ներառումը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում

Ինչպես սահմանվում է Կոնվենցիայով, մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) (այսուհետ՝ թրաֆիքինգ) <<մարդու իրավունքների խախտում և անձի արժանապատվությանն ու անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգություն է>> (Կոնվենցիայի նախաբանի 3-րդ պարբերություն): Հետևաբար, համաձայն Կոնվենցիայի տառին և ոգուն, թրաֆիքինգը մարդու իրավունքների խախտում է և ոչ միայն՝ քրեական հանցագործություն:

Հարցեր

<u>Հարց 4:</u> Նշեք, արդյո՞ք ներքին օրենսդրությամբ թրաֆիքինգը համարվում է մարդու իրավունքների խախտում (թե հանդիսանում է միայն քրեական հանցագործություն, տես Բաժին II.3 ստորև):

Այո: ՀՀ ներպետական օրենսդրությամբ թրաֆիքինգը հանդիսանում է մարդու դեմ ուղղված հանցագործություն: Այս առումով, մարդու դեմ ուղղված ցանկացած հանցագործություն խախտում է մարդու և քաղաքացու ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով ամրագրված մի շարք հիմնարար իրավունքներ: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 132 և 132.2 հոդվածները, որոնցով սահմանվում է քրեական պատասխանատվություն մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման համար, ընդգրկված են ՀՀ քրեական օրենսգրքի մարդու դեմ ուղղված հանցագործությունների բաժնում: Հետևաբար, թրաֆիքինգը ոչ միայն քրեական հանցագործություն է, այլ նաև մարդու իրավունքների խախտում: Այդ հանցագործությամբ խախտվում է անձի ազատությունը և արժանապատվությունը:

<u>Հարց 5:</u> Նշեք, ինչպիսի՞ իրավական պաշտպանություն է նախատեսում ներքին օրենսդրությունը (նաև նախադեպային իրավունքը՝ առկայության դեպքում) մարդու իրավունքների խախտումների պարագայում, որը կիրառելի է նաև թրաֆիքինգի դեպքերում (օրինակ՝ սահմանադրական պաշտպանություն, պետության դրական պարտավորություն, առաջնահերթ քննություն, և այլն):

Քանի որ թրաֆիքինգը իրականացնելիս խախտվում են մարդու իրավունքները, հետևաբար ներքին օրենսդրությունը նախատեսում է այդ իրավունքների խախտման դեպքում բազմաբնույթ իրավական պաշտպանության միջոցներ՝ կախված խախտման բնույթից և կոնկրետ իրավիճակից: Այսպես, թրաֆիքինգի զոհը իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով կարող է դիմել քրեական հետապնդման մարմիններին՝ հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Եթե թրաֆիքինգի զոհի խախտված իրավունքները վերականգնելու ոլորտում առկա են որոշակի իրավական խնդիրներ, արգելքներ կամ իրավական անորոշություն, ապա զոհը կարող է օգտագործել սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքը՝ Սահմանադրական դատարանում վիճարկելով այն իրավական նորմը, որը խոչընդոտում է վերականգնել իր խախտված իրավունքները, օրինակ՝ պատճառված վնասի հատուցման մասով:

Բացի այդ, զոհի իրավական պաշտպանությունը նախատեսված է Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց Ազգային ուղղորդման կարգով:

Բաժին I.2. Թրաֆիքինգի հանդեպ համապարփակ մոտեցում, թրաֆիքինգի դեմ պայքարի, կանխարգելման և զոհերի պաշտպանության գործում բոլոր դերակատարների և գործողությունների համակարգում, միջազգային համագործակցություն

Այս բաժնում տեղ գտած հարցերը նպատակ ունեն վեր հանել տեղեկատվություն Կոնվենցիայի մասնակից պետությունների օրենսդրության և թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքականության համապարփակ բնույթի վերաբերյալ, հատկապես՝ կանխարգելման, պաշտպանության ու քրեական հետապնդման (1-ին հոդված), ինչպես նաև գործակցության (29-րդ, 32-րդ և 35-րդ հոդվածներ) ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների առումով:

Գործակցությունը պետք է ներառի հետևյալը:

- Ազգային համակարգում և համագործակցություն թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ներգրավված բոլոր դերակատարների միջև (29-րդ հոդվածի 2-րդ պարբերություն): Թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ ազգային յուրաքանչյուր գործողություն պետք է համապարփակ և բազմոլորտ լինի, և հաշվի առնի անհրաժեշտ բազմապրոֆիլ փորձառությունը: Այս համապարփակ ազգային գործողությունների համակարգումը պետք է իրականացվի հատուկ պետական մարմնի կամ կառույցի միջոցով: Սրանք Կոնվենցիայի 29-րդ հոդվածով նշված <<համակարգող մարմիններն>> են, որոնք տարբերվում են <<ազգային զեկուցողներից>>: Կոնվենցիայով պարտադիր է ազգային քաղաքականության և գործողությունների համակարգումը, մինչդեռ ազգային զեկուցողներ նշանակելն ըստ հայեցողության է:

- Միջազգային համագործակցություն տարբեր մասնակից պետությունների բոլոր դերակատարների միջև (Կոնվենցիայի 6-րդ գլուխ): Կոնվենցիայի 32-րդ հոդվածը սահմանում է միջազգային համագործակցությունը կարգավորող ընդհանուր սկզբունքները: Նախ, մասնակից պետությունները պետք է հնարավորինս լայնածավալ համագործակցություն ծավալեն միմյանց հետ: Այս սկզբունքը պահանջում է մասնակից պետություններից ապահովել միմյանց հետ համագործակցության լայն շրջանակներ և նվազագույնի հասցնել միջազգային մակարդակով տեղեկատվության և ապացույցների անխափան ու արագ փոխանացման առումով առկա խոչընդոտները: Համագործակցելու պարտավորության ընդհանուր նկարագիրը սահմանված է 32-րդ հոդվածով. համագործակցության շրջանակը պետք է ներառի թրաֆիքինգի կանխարգելումն ու դրա դեմ պայքարը (առաջին պարբերույթ), զոհերի պաշտպանությունն ու օժանդակությունը (երկրորդ պարբերույթ) և Կոնվենցիայով սահմանված քրեական հանցագործությունների, այսինքն՝ 18-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածներում նշված հանցագործությունների հետաքննությունը կամ դատավարությունը (երրորդ պարբերույթ):

- Համագործակցություն և գործընկերություն քաղաքացիական հասարակության հետ (35-րդ հոդված): Պետական մարմինների, պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության միջև ռազմավարական գործընկերությունը, որին անդրադարձ է կատարված Կոնվենցիայի 35-րդ հոդվածումվ, ենթադրում է համագործակցային շրջանակներ, որոնցում պետական մարմիններն իրագործում են Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները քաղաքացիական հասարակության հետ գործողությունները համակարգելու միջոցով: Անհրաժեշտ է նաև համագործակցություն ծավալել թրաֆիքինգի կանխարգելման և զոհերի պաշտպանության ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող միջազգային ՀԿ-ների հետ:

Հարցեր թրաֆիքինգի նկատմամբ համապարփակ մոտեցման վերաբերյալ (1-ին հոդված):

<u>Հարց 6:</u> Նշել թրաֆիքինգի կանխարգելման, զոհերի պաշտպանության և աջակցության, թրաֆիքինգի քրեականացման և այն իրականացնողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ հիմնական ներքին օրենսդրական և (կամ) ենթաօրենսդրական ակտերի և դրույթների անվանումները:

Հիմնական ներքին օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերն են.

- ՀՀ քրեական օրենսգիրք;
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք;
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք;
- <<Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին>> ՀՀ օրենք;
- <<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենք;
- <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենք;
- <<Երեխայի իրավունքների մասին>> ՀՀ օրենք;
- Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց Ազգային ուղղորդման կարգ */անգլերեն ոչ պաշտոնական թարգմանությունը կցվում է/*;

- <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4 -ի թիվ 318-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1003-Ն որոշումը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ապահովելու մասին:

- <<Հայաստանի Հանրապետությունում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի կազմակերպման>> Ազգային ծրագիր */անգլերեն ոչ պաշտոնական թարգմանությունը կցվում է/*:

<u>Հարց 7:</u> Արդյո՞ք երկիրն ունի թրաֆիքինգի դեմ պայքարի գծով համապարփակ ազգային քաղաքականություն և (կամ) գործողությունների ազգային ծրագիր: Դրական պատասխանի դեպքում նշել ծրագրի անվանումը, ընդունման ամսաթիվն ու ընդգրկող ժամանակահատվածը, գործողությունների հիմնական ուղղությունները և իրականացման գծով պատասխանատու մարմինը (մարմինները):

<<Հայաստանի Հանրապետությունում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի կազմակերպման>> երրորդ Ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը ՀՀ կառավարության կողմից ընդունվեց 2010թ. սեպտեմբերին:

Ծրագրում ներկայացված ռազմավարություններն ու գործողություններն ուղղված են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմանը և ներառված են 6 հիմնական բաժնում՝

1) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրություն և օրենքների կիրառում,
2) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում,
3) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանություն և աջակցություն,
4) համագործակցություն,
5) ուսումնասիրությունների կատարում, մոնիտորինգ և գնահատում,
6) համակարգում:

Ծրագրի իրականացման համար պատասխանատու են ՀՀ-ում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդում ընդգրկված բոլոր շահագրգիռ գերատեսչությունները:

<u>Հարց 8:</u> Արդյո՞ք երկրում կան թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի պաշտպանության ոլորտում մասնագիտացված անձինք կամ կառույցներ: Դրական պատասխանի դեպքում՝ նշել տվյալ անձանց կամ կառույցների անձնակազմի համար կազմակերպված ուսուցողական դասընթացների տեսակներն ու տևողությունը: Նշել նաև դասընթացների համար հատկացված ֆինանսական միջոցների ծավալը (եվրոյով):

Թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի պաշտպանության ոլորտում ստորև նշված հիմնական մասնագիտացված կառույցների ներկայացուցիչների համար պարբերաբար կազմակերպվում են ուսուցողական դասընթացներ, մասնավորապես.

<u>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն</u>

ՀՀ ոստիկանության կազմում թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացած ստորաբաժանումը՝ Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության /ԿՀԴՊԳՎ/ թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինն է, սակայն նշված ոլորտում մասնագիտացվում են նաև տարածքային ենթակառույցների առանձին ծառայողներ:

2009 և 2010 թվականների ընթացքում ոստիկանության համակարգմամբ և անմիջական մասնակցությամբ ոստիկանության աշխատակիցների համար կազմակերպվել են <<Թրաֆիքինգ>>-ի խնդիրներին վերաբերվող դասընթացներ /119 աշխատակից 2009թ.-ին և 104 աշխատակից 2010թ.-ին/:

Ոստիկանության 6 աշխատակիցների համար դասընթացներ են կազմակերպել Վրաստանում, Բելառուսի Հանրապետությունում՝ այլ պետությունների ներկայացուցիչների հետ համատեղ:

Ոստիկանության կողմից մշակվել և ՄԱԶԾ/UNDP/ աջակցությամբ հրապարակվել է իրավապահ մարմինների համար նախատեսված՝ <<Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը>> մեթոդական ձեռնարկ:

ՀՀ Ոստիկանության ակադեմիայի ուսումնական ծրագրերում ներառված են թրաֆիքինգին վերաբերող համապատասխան դասաժամեր, ինչպես նաև գործում է էլեկտրոնային վերապատրաստման դասընթացների /CBT/ դասասենյակ:

<u>ՀՀ գլխավոր դատախազություն</u>

ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը հսկողություն է իրականացնում ՀՀ-ում թրաֆիքինգի դեպքերի առթիվ քննվող քրեական գործերի հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ և այդ գործերով դատարանում պաշտպանում է մեղադրանքը:

Դատախազության բոլոր աշխատակիցները անցնում են տարեկան վերապատրաստում <<Դատախազության դպրոց>> ՊՈԱԿ-ում, որտեղ 2010թ. ներդրվել է Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ էլեկտրոնային վերապատրաստման դասընթացը /CBT/: Բացի այդ, <<Դատախազության դպրոց>> ՊՈԱԿ-ում դատախազների տարեկան վերապատրաստման ծրագրում ընդգրկված են <<Թրաֆիքինգի քրեաիրավական բնութագիրը>> և <<Թրաֆիքինգի գործերով քննության տակտիկայի և մեթոդիկայի առանձնահատկությունները>> դասընթացները:

<u>ՀՀ արդարադատության նախարարություն</u>

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում քրեակատարողական ծառայողների և ԴԱՀԿ ծառայողների համար անց են կացվում վերապատրաստման դասընթացներ, որոնցում ներառված են նաև թրաֆիքինգին նվիրված ուսումնական դասաժամեր:

<u>Ազգային անվտանգության ծառայություն</u>

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը՝ ԱՄՆ կառավարության օժանդակությամբ 2010թ.-ի հունվարից իրականացնում է <<Հայաստանի ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության ջոկատի կարողությունների հզորացում>> ծրագիրը, որի նպատակն է կատարելագործել սահմանային կառավարման համակարգերը Հայաստանում և նպաստել անօրինական միգրացիոն հոսքերի նվազմանը՝ սահմանապահ զորքերի և հարակից աշխատակազմի կարողությունների զարգացման միջոցով: Ծրագրի շրջանակներում մշակվել է կանոնավոր և շարունակական ուսուցման ծրագիր, որն ընդգրկում է <<Թրաֆիքինգի կանխարգելում>> վերնագրով թեմա:

Սահմանապահ զորքերի ներկայացուցիչների համար կազմակերպվել են հետևյալ դասընթացներ՝ կեղծ փաստաթղթերի հայտնաբերում (19 մասնակից); համակարգչային (19 մասնակից) և սահմանների կառավարման տեղեկատվական համակարգ (BMIS) համակարգից օգտվելու դասընթացներ (19 մասնակից), օրենսդրություն (19 մասնակից), թրաֆիքինգ և մարդկանց մաքսանենգություն (19 մասնակից): Բացի այդ սահմանապահ զորքերի 5 աշխատակիցների համար կազմակերպվել է ուսուցողական ուղևորություն դեպի Ավստրիա և Ռումինիա, որի ընթացքում մասնակիցները ծանոթացել են սահմանների կառավարման և թրաֆիքինգի դեմ պայքարի ժամանակակից մեթոդներին, ինստիտուցիոնալ համակարգին և իրավական դաշտին:

տես նաև Հարց 22-ի պատասխանը:

<u>Հարց 9:</u> Արդյո՞ք երկրի պետական կառավարման համակարգում կա որևէ պետական մարմին (կառույց), որը պատասխանատու է թրաֆիքինգի դեմ պայքարի հարցում պետական բոլոր դերակատարների և գործողությունների համակարգման համար (անկախ դիրքից և իրավասությունների շրջանակից, ինչպես նաև այն հանգամանքից, արդյոք տվյալ մարմինը ստեղծվել է հենց այս նպատակով, թե տվյալ գործառույթը վերագրվել է արդեն իսկ գոյություն ունեցող որևէ պետական մարմնի): Դրական պատասխանի դեպքում՝ նշել վերջինիս անվանումը, վարչական կարգավիճակը, տարեկան բյուջեն (եվրոյով), մարդկային ռեսուրսները, կազմը և իրավասությունները: Հակառակ պարագայում՝ նշել մոտ ապագայում նման մարմնի (կառույցի) ստեղծման ծրագրերի և այլ անհրաժեշտ մանրամասների մասին:

Ինչպես նշված է Հարց 1-ի պատասխանում, Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված աշխատանքները համակարգվում են Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդի կողմից, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2007թ.-ի դեկտեմբերի 6-ի թիվ 861-Ա որոշմամբ: Խորհուրդը ղեկավարում է ՀՀ փոխվարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկված են ՀՀ պետական մարմինները ներկայացնող հետևյալ պաշտոնատար անձինք.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ էկոնոմիկայի նախարար

ՀՀ ֆինանսների նախարար

ՀՀ կրթության և գիտության նախարար

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

ՀՀ առողջապահության նախարար

ՀՀ արտաքին գործերի նախարար

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

ՀՀ նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության պետ

Խորհուրդը չունի առանձնացված բյուջե, քանի որ թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված գործողությունները իրականացվում են խորհրդի կազմում ընդգրկված համապատասխան կառույցներին հատկացվող բյուջեից:

<u>Հարց 10:</u> Արդյո՞ք վերոնշյալ համակարգող կառույցը պատասխանատու է նաև թրաֆիքինգի վերաբերյալ վարչական կամ հարցումների տվյալների հավաքման և համակարգման համար: Հակառակ պարագայում, նշել, թե որ մարմինն է (կառույցը) պատասխանատու նման գործառույթի իրականացման համար:

Թրաֆիքինգի դեմ պայքարում ներառված բոլոր իրավապահ մարմիններն իրենց լիազորությունների սահմաններում իրականացնում են համապատասխան տվյալների հավաքում և համակարգում: Վերը նշված

գործունեության արդյունքները պարբերաբար զեկուցվում են Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդին, որին բոլոր շահագրգիռ գերատեսչությունները ներկայացնում են նաև կիսամյակային և տարեկան հաշվետվություններ:

<u>Հարց 11:</u> Արդյո՞ք համակարգող ազգային կառույցի շրջանակներում ՀԿ-ներն ունեն լիիրավ անդամի կարգավիճակ: Դրական պատասխանի դեպքում՝ քանիսն են դրանք: Խնդրում ենք նկարագրել ՀԿ-ների անդամակցության չափանիշները:

Խորհրդի նիստերին դիտորդի կարգավիճակով հրավիրվում են հակաթրաֆիքինգային գործունեություն իրականացնող հետևյալ հասարակական կազմակերպությունները, որոնք ակտիվ մասնակցում են քննարկումներին և ունեն մեծ ներդրում այս ոլորտի ռազմավարությունների մշակման և բազմաթիվ նախաձեռնությունների իրականացման գործում.

- <<Հույս և օգնություն>>

- <<Դեմոկրատիան այսօր>>

- <<ԱՄՔՈՐ»-ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԿ

- <<Մարդը դժբախտության մեջ>> չեխական կազմակերպության հայաստանյան գրասենյակ

<<Հայ օգնության միություն>>

<<Վորլդ վիժն>> Հայաստան

Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա

Հետաքննող լրագրողների ասոցիացիա

<u>Հարց 12:</u> Արդյո՞ք կան համակարգող ազգային կառույցին անդամակցող այլ ազգային կամ միջազգային մարմիններ կամ կառույցներ: Դրական պատասխանի դեպքում՝ մանրամասնել պատասխանը:

Խորհրդի նիստերին հրավիրվում են մասնակցելու նաև ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության, ինչպես նաև ստորև նշված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները.

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ

Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ

ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ

ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

Աշխատանքի միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

<u>Հարց 13</u>: Նկարագրել թրաֆիքինգի դեմ պայքարի հարցում այլ երկրների հետ համագործակցության շրջանակները կարգավորող օրենսդրական հիմքերը.

- ***ազգային օրենսդրություն,***
- ***միջազգային գործիքներ/համաձայնագրեր (երկկողմ և (կամ) բազմակողմ):***

Նշել իրավական փաստաթղթերի անվանումները:

Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցում այլ երկրների հետ համագործակցությունը կարգավորող իրավական ակտերն են.

ազգային օրենսդրություն՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ինչպես նաև իրավական այլ ակտեր:

միջազգային գործիքներ/համաձայնագրեր՝

1. 16.5.2005թ. <<Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի մասին>> Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան /ուժի մեջ է մտել 01.08.2008թ./:

2. <<Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի>> ՄԱԿ-ի կոնվենցիան և դրան կից՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ» թիվ 1 ու «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» թիվ 2 կամընտիր արձանագրությունները /ուժի մեջ են մտել 19.04.2003թ/:

3. ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին » / ուժի մեջ է մտել 30.07. 2005թ./:

4. <<Մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին>> համաձայնագիրը /ուժի մեջ է մտել 4.09.2006թ./:

5. <<Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին>> կոնվենցիա /Հաագայի կոնվենցիա/ /ուժի մեջ է մտել 01.06.2007թ./:

6. 22.01.1993թ. <<Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին>> Մինսկի կոնվենցիան / ուժի մեջ է մտել 21.12.1994թ./:

7. 07.10.2002 <<Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին>> Քիշնևի կոնվենցիան / ուժի մեջ է մտել 19.02.2005թ./:

8. 13.12.1957թ. <<<Հանձնման մասին>> եվրոպական կոնվենցիան / ուժի մեջ է մտել 25.04.2002թ./:

9. 20.04.1959թ. <<Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին>> եվրոպական կոնվենցիան/ ուժի մեջ է մտել 25.04.2002թ./:

10. 12.09.1998թ. <<Քրեական պատիժների իրականացման կազմակերպման ոլորտում համագործակցության մասին>> միջգերատեսչական համաձայնագիր /վավերացվել է 01.05.1999թ./:

Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության մի շարք կոնվենցիաներին, այդ թվում «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» թիվ 29, «Հարկադիր աշխատանքի վերացման մասին» թիվ 105 և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին » թիվ 182 կոնվենցիային:

<<Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդի և Արաբական Միացյալ Էմիրությունների մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի ազգային

կոմիտեի միջև 05.12.2009թ. ստորագրված, մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարում համագործակցության մասին>> փոխըմբռնման հուշագիր:

Բացի այդ, հետևյալ երկրների հետ ստորագրվել են հետ ընդունման /ռեադմիսիայի/ մասին համաձայնագրեր. Գերմանիա, Բուլղարիա, Դանիա, Լիտվա, Շվեյցարիա, Շվեդիա, Նորվեգիա, Չեխիա, Ռուսաստան, Բենելուքսի երկրներ:

<u>Հարց 14</u>: Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել երկրի կողմից ապահովելու, որ հարցում ներկայացրած կողմն ըստ պատշաճի տեղեկացվի միջազգային համագործակցության շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ իրականացված գործողությունների վերջնարդյունքների վերաբերյալ, ինչը սահմանված է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով:

Միջազգային պայմանագրերի և ներպետական օրենսդրությանը համապատասխան, հարցում ներկայացրած կողմին պատշաճ կերպով լիարժեք տեղեկատվություն է տրամադրվում ՀՀ գլխավոր դատախազության միջոցով:

<u>Հարց 15:</u> Արդյո՞ք համապատասխան մարմիններն ունեն լիազորություն այլ երկրի գործընկերներին տրամադրելու տեղեկատվություն առանց նախապես հարցում ստանալու, եթե տեղեկատվության նման բացահայտումը կարող է օգտակար լինել ստացող երկրի համար՝ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների գծով քննություն կամ դատավարություն իրականացնելու կամ սկսելու գործում: Դրական պատասխանի դեպքում՝ նշել փոխանցվող տեղեկատվության ծավալը և ներգրավված մարմինների անվանումները:

Առանց նախապես հարցում ստանալու ՀՀ իրավասու մարմինները /ՀՀ ոստիկանություն և ՀՀ գլխավոր դատախազություն/ կարող են այլ երկրների իրավապահ մարմիններին տրամադրել թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվություն՝ նկատի ունենալով, որ տեղեկատվության նման բացահայտումը կարող է օգտակար լինել ստացող երկրի համար՝ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների գծով քննություն կամ դատավարություն իրականացնելու կամ սկսելու գործում:

Վերը նշված տեղեկատվությունը կարող է փոխանցվել դիվանագիտական խողովակներով, Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի /ԱԿԲ/ կամ համապատասխան մասնագիտացված ստորաբաժանումների անմիջական կապի միջոցով:

<u>Հարց 16</u>: Արդյո՞ք թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով ազգային ոստիկանականությունն, երկկողմ կամ բազմակողմ իրավական հիմքով, իրականացնում է համատեղ գործողություններ այլ Կողմերի ոստիկանական ուժերի հետ: Դրական պատասխանի դեպքում՝ նկարագրել իրականացված գործողությունները և ներկայացնել դրանց ազդեցության գնահատականը: Հակառակ պարագայում, նկարագրել համատեղ գործողությունների ապագա ծրագրերը կամ դրանց առումով առկա խոչընդոտները:

ՀՀ ոստիկանությունը իրականացնում է փոխհամագործակցություն հատկապես տարանցիկ և նպատակակետ երկրներ համարվող պետությունների իրավապահ մարմինների հետ: Նշված փոխհամագործակցությունը իրականացվում է հիմնականում թրաֆիքինգի համար հետախուզման մեջ գտնվող հանցավորների հայտնաբերման ուղղությամբ, ինչպես նաև զոհերի ռեպատրիացիայի հետ կապված հարցերով և օպերատիվ, քննչական զուգահեռ գործողություններ, ստուգումներ իրականացնելու կտրվածքով:

Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք արդյունավետ համագործակցություն իրականացնել այդ երկրի իրավապահ մարմինների հետ և Ինտերպոլի ԱԿԲ-ն միակ կապի միջոցն է Թուրքիայի հետ որոշակի փոխհամագործակցություն իրականացնելու համար:

Հետաքրքրություն ներկայացնող մյուս պետությունների հետ փոխհամագործակցությունը կարելի է համարել դրական:

Մասնավորպես՝ 2009, 2010 թվականների ընթացքում ակտիվ փոխհամագործակցություն է իրականացվել ՌԴ, ԱՄԷ, Վրաստանի, Բելառուսի, Նիդերլանդների, Բելգիայի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Եմենի, Իտալիայի իրավապահ մարմինների հետ:

Բաժին I.3. Կողմերի ներքին օրենսդրությամբ <<թրաֆիքինգ>> և <<զոհ>> հասկացությունների սահմանումները

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի ա կետի համաձայն՝ թրաֆիքինգը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչների համակցությունից, որոնցից յուրաքանչյուրը թվարկված է սահմանմամբ.

- *գործողություն՝ 'մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, պահում կամ ընդունում',*
- *միջոցով՝ սպառնալիքի կամ ուժի գործադրմամբ կամ հարկադրանքի որևէ այլ ձևի կիրառմամբ, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, պաշտոնական դիրքի կամ խոցելի վիճակի չարաշահմամբ անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով, գումարների կամ այլ շահի տրամադրմամբ կամ ձեռքբերմամբ,*
- *որպես նպատակ ունենալով շահագործումը, որը առնվազն ներառում է մարմնավաճառության նպատակներով այլ անձանց շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համարժեք գործելակերպը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հիմք է հանդիսանում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի բ կետի համար այն առումով, որ նույն հոդվածի համաձայն՝ թրաֆիքինգի զոհի համաձայնությունը 4-րդ հոդվածի ա կետում նշված շահագործման այս կամ այն ձևին անկարևոր է, եթե կիրառվել է նույն հոդվածում նշված միջոցներից որևէ մեկը:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի գ կետի համաձայն՝ շահագործման նպատակով երեխային հավաքագրելը« տեղափոխելը« փոխանցելը« թաքցնելը կամ ընդունելը համարվում է մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) նույնիսկ այն դեպքում« երբ դա կապված չէ 4-րդ հոդվածի ա կետում նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ: Էական չէ նաև երեխայի կողմից շահագործմանը տրված համաձայնության առկայության փաստը: Կոնվենցիայի 4-րդ հոդվածի դ կետի համաձայն՝ երեխա է համարվում 18 տարին չլրացած ցանկացած անձ:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի ե կետի համաձայն՝ զոհ է համարվում սույն հոդվածում սահմանված մարդկանց շահագործման (թրաֆիկինգ) ենթակա ցանկացած ֆիզիկական անձ: Զոհ է համարվում ցանկացած անձ, ով ենթարկվել է Կոնվենցիայի 4-րդ հոդվածի ա կետով սահմանված բաղադրիչների համակցությանը (գործողություն-միջոց- նպատակ):

Հարցեր.

<u>Հարց 17</u>: Արդյո՞ք ներքին օրենսդրությամբ տրված թրաֆիքինգի սահմանումը ներառում է Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 'ա' ենթակետով նախատեսված երեք բաղադրիչների (գ(գործողություն-միջոց- նպատակ) բոլոր տարրերը: Նկարագրել, ինչպես են դրանք ներառվել ներքին օրենսդրության մեջ:

Այո: Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 'ա' ենթակետով նախատեսված երեք բաղադրիչները ներառված են ներքին օրենսդրությամբ տրված թրաֆիքինգի սահմանման մեջ /Քրեական օրենսգիրք, 132 հոդված/: Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ

դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման պարագայում բացակայում է՝ միջոցը /Քրեական օրենսգիրք, 132.2 հոդված/:

<u>Հարց 18</u>: Նշել, թե ստորև բերված թրաֆիքինգի ձևերից որո՞նք են ճանաչված ներքին օրենսդրությամբ:

- ազգային,

- անդրազգային,

-կազմակերպված հանցավորության հետ կապ ունեցող,

-կազմակերպված հանցավորության հետ կապ չունեցող:

Թրաֆիքինգի նշված բոլոր ձևերը նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 132 և 132.2 հոդվածներով: Մանսավորապես, վերը նշված հոդվածներից բխում է, որ հանցագործություն է համարվում ինչպես ներքին, այնպես էլ անդրազգային, և նաև կազմակերպված հանցավորության հետ կապված և չկապված թրաֆիքինգը:

Արարքը կազմակերպված խմբի կողմից կատարելը համարվում է հանցակազմի ծանրացնող հանգամանք:

<u>Հարց 19</u>: Արդյո՞ք ներքին օրենսդրությամբ թրաֆիքինգի զոհ է համարվում այն ֆիզիկական անձը, ով Կոնվենցիայի 4-րդ հոդվածի ա կետի հատկանիշներով ենթարկվել է թրաֆիքինգի: Ներկայացնել ներքին օրենսդրությամբ 'թրաֆիքինգի զոհ' հասկացության սահմանումը: Խնդրում ենք օրենսդրական դրույթները (թարգմանությունը) ներկայացնել անգլերեն կամ ֆրանսերեն:

Այո: ՀՀ կարավարության 20 նոյեմբերի 2008 թվականի որոշմաբ հաստավված մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի>> 2-րդ կետի համաձայն՝ թրաֆիքինգի զոհ է համարվում թրաֆիքինգի ենթարկված ցանկացած ֆիզիկական անձ:

Իսկ ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսդրության մեջ <<թրաֆիքինգի զոհ>> հասկացության փոխարեն օգտագործվում է <<տուժող>> հասկացությունը:

<u>Հարց 20</u>: Արդյո՞ք ներքին օրենսդրությամբ թրաֆիքինգի զոհ են ճանաչվում.

- ***տղամարդիկ,***
- ***կանայք,***
- ***երեխաները:***

Այո:

<u>Հարց 21</u>: Որքանո՞վ է որոշիչ անձի համաձայնությունը մտադրված կամ փաստացի շահագործմանը՝ ներքին օրենսդրությամբ վերջինիս թրաֆիքինգի զոհ համարելու հարցում: Խնրում ենք մանրամասնել, արդյոք ներքին օրենսդրությունը դիտարկում է զոհերի երեք դասերի՝ տղամարդկանց, կանանց կամ երեխաների կողմից տրված համաձայնությունը: Խնդրում ենք ներկայացնել օրինակներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 132 և 132.2 հոդվածների համաձայն տղամարդկանց և կանանց համաձայնությունը մտադրված կամ փաստացի շահագործմանը որոշիչ չէ, եթե այդ համաձայնությունը ստացվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձեւերով, առեւանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով:

Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման պարագայում համաձայնությունը բոլոր դեպքերում չի դիտվում որպես կշռադատված համաձայնություն և ցանկացած դեպքում՝ շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը քրեական օրենսգրքով պատժելի արարք է նույնիսկ եթե այդպիսի անձանց նկատմամբ չեն կիրառվել վերոգրյալ հարկադրանքի եղանակները:

II. Թրաֆիքինգի կանխարգելման, զոհերի իրավունքների պաշտպանության ու ամրապնդման և թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու ուղղությամբ մասնակից պետությունների կողմից ձեռնարկած քայլերը

Բաժին II.1. Թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված քայլեր

Այս բաժնում տեղ գտած հարցերը նպատակ ունեն վեր հանել տեղեկատվություն Կոնվենցիայի կողմերի ձեռնարկած կանխարգելիչ այն միջոցառումների վերաբերյալ, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 2-րդ գլխով (5-րդ և 9-րդ հոդվածներ): Կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը վերաբերում է բոլոր երկրներին՝ ծագման, տարանցիկ և նպատակակետ: Երկրի առանձնահատկություններով պայմանավորված՝ ձեռնարկելիք միջոցառումները կարող են տարբերվել, սակայն թրաֆիքինգի դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը պարտադիր է բոլոր երկրների համար:

Հարցեր.

<u>Հարց 22</u>: Արդյո՞ք վերջին երկու տարիներին իրականացվել է ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով որևէ տեղեկատվական արշավ կամ ծրագիր թրաֆիքինգի հնարավոր զոհերին շահագործման տարբեր ձևերի մասին տեղեկացնելու նպատակով: Դրական պատասխանի դեպքում՝ նշել, թե արդյոք նման միջոցառումը հիմնված է եղել արդյունավետ կանխարգելիչ միջոցների վերաբերյալ իրականացված վերլուծության արդյունքների վրա: Արդյո՞ք նման միջոցառումը ուղղված է եղել թրաֆիքինգի հնարավոր զոհերի որևէ առանձին թիրախային խմբի: Ո՞ր պետական կամ ոչ պետական մարմիններն են հանդիսացել նման միջոցառման իրականացման պատասխանատու: Նկարագրել արշավի (ծրագրի) համար օգտագործված նյութերը և տարածման եղանակը: Հնարավորության դեպքում՝ ներկայացնել նաև արշավի (ծրագրի) ազդեցության գնահատականը: Մեկից ավելի արշավների (ծրագրերի) իրականացման դեպքում, ներկայացնել մանրամասներ դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ: Ներկայումս նոր միջոցառումների նախատեսման դեպքում՝ ներկայացնել մանրամասները:

Վերջին երկու տարիներին իրականացվել են բազմաթիվ քարոզարշավներ և դասընթացներ: Այդ թվում՝

<u>ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն</u>

2009թ.-ին մշակվել և 100.000 օրինակով տպագրվել է <Օրինական ճանապարհով օտարերկրյա պետություններ մուտք գործելու, բնակվելու և աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին> տեղեկատվական թերթոնը՝ այդ նպատակով ծախսելով ՀՀ պետական բյուջեից հատկացված 3 մլն դրամը /մոտ 6.000 եվրո/:

Թերթոնի 10.000 օրինակ տրամադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայության գործակալությանը, 30.000-ը՝ սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմիններին, 20.000-ը՝ <<Զվարթնոց>> օդանավակայանին, 40.000-ը՝ հանրապետության տարածքում գործող միգրացիոն հարցերով զբաղվող տարբեր ռեսուրս կենտրոններին:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ <<Ապահով ճամփորդություն>> նախամիգրացիոն գրանցման և պատշաճ հարցումների ծրագրի շրջանակներում Միգրացիոն պետական ծառայությունում գործել է Միգրանտների սպասարկման կենտրոն: Կենտրոն դիմած ՀՀ քաղաքացիներին տրամադրվել են արժանահավատ տեղեկություններ հավանական նպատակակետ երկրներ մուտքի, բնակության և աշխատանքային գործունեության կարգի և պայմանների, ինչպես նաև թրաֆիքինգի վտանգի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ խորհրդատվություն է տրվել մոտ 1.000 անձի: Խորհրդատվության հետ մեկտեղ նրանց տրամադրվել են տարբեր տեղեկատվական գրքույկներ և թերթոններ:

Խորհրդատվության հետ նրանց տրամադրվել է նաև ՀՀ-ում տեղակայված միջազգային կազմակերպությունների համատեղ ուժերով հրատարակված <<Ռուսաստանի Դաշնությունում ժամանակավոր աշխատանքային միգրանտի իրավական ուղեցույց>>, <<Միգրանտների տեղեկատվական ուղեցույց Հայաստան-Թուրքիա>>, <<Միգրանտների տեղեկատվական ուղեցույց Հայաստան-Գերմանիա>>, <<Միգրանտների տեղեկատվական ուղեցույց Հայաստան-Հունաստան>>, <<Ուկրաինայից, Մոլդովայից, Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից Ռուսաստան մեկնող աշխատանքային միգրանտների համար>> գրքույկները, ԱՄԿ-ի կողմից հրատարակված <<Ռուսաստանի Դաշնություն մեկնող միգրանտ աշխատողների համար>> ուղեցույցը, <<Հույս և օգնություն>> ՀԿ-ի կողմից հրապարակված <<Ի՞նչ պետք է իմանա Ռուսաստանի Դաշնություն մեկնողը>> և միգրացիոն ծառայության կողմից հրատարակված <<Օրինական ճանապարհով օտարերկրյա պետություններ մուտք գործելու, բնակվելու և աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին>> տեղեկատվական թերթոնները:

<u>ՀՀ կրթության նախարարություն</u>

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում 12-ամյա կրթակարգին անցնելու կապակցությամբ վերանայվել են առարկայական ծրագրերն ու չափորոշիչները: Լրամշակվել են հիմնական և ավագ դպրոցների «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչները, որոնցում ներառվել են մարդու իրավունքները, գենդերային հավասարությունը և մարդու արժանապատվության ու ամբողջական կերպարի կարևորությունը, սեռային խտրականության անթույլատրելիությունը լուսաբանող հարցեր:

ՀՀ կրթության և գիտության նախարարության և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ**)** հայաստանյան առաքելության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն 2009-2010թթ. իրականացվել է «Մարդկանց առևտուրը կանխելուն ուղղված դպրոցական կրթություն Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային փորձնական ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում մշակվել են «Թրաֆիքինգ» 2 տեսակի ձեռնարկներ (սովորողների և ուսուցիչների համար), որոնք ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից երաշխավորվել են գործածության, որպես հանրակրթական ավագ դպրոցի ուսումնաօժանդակ ձեռնարկներ:

Իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

1. Տպագրվել է՝ «Թրաֆիքինգ» (ձեռնարկ սովորողների համար), «Թրաֆիքինգ» (ձեռնարկ ուսուցիչների համար), «Թրաֆիքինգ» (գրքույկ ծնողների համար), գրպանի տեղեկատվական քարտ, տեղեկատվական պաստառ: 2. Արտադրվել և բազմացվել է սոցիալական գովազդ՝ թրաֆիքինգի կանխարգելման գործում դպրոցական կրթության կարևորության վերաբերյալ: 3. Թարգմանվել և բազմացվել է ՄՄԿ Վրաստանի առաքելության կողմից արտադրված ուսուցողական տեսաֆիլմը: 4. Իրականացվել է շուրջ 1500 ուսուցիչների, ինչպես նաև 200 քոլեջների ու արհեստագործական ուսումնարանների դասախոսների վերապատրաստում:

Ծրագրի շրջանակներում մշակված ձեռնարկները տրամադրվել են «Վորլդ Վիժն-Հայաստան», «Մարդը դժբախտության մեջ» և «Հայկական Կարիտաս» կազմակերպություններին՝ իրենց կողմից նմանատիպ ծրագրերի իրականացման ժամանակ դրանք դպրոցներում գործածելու նպատակով:

2010 թվականի ընթացքում «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի միջոցով իրականացվել է «Պայքար թրաֆիքինգի դեմ հասարակության ներգրավման և համայնքային խնամատարության միջոցով» ծրագիրը: Ծրագրում ընդգրկված 20 հանրակրթական դպրոցների և 2 գիշերօթիկ խնամքի հաստատությունների 105 մանկավարժների համար կազմակերպվել են «Թրաֆիքինգ» թեմայով վերապատրաստման դասընթացներ: Դասընթացները վարել են «Կարողություն և զարգացում հանուն քաղաքացիական հասարակության» հասարակական կազմակերպության մասնագետները: Դասընթացների նպատակն էր բարձրացնել ուսուցիչների և դաստիարակների գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որպեսզի վերջիններս պատրաստ լինեն երեխաների հետ վարելու թրաֆիքինգի թեմաներով դասեր: Ծրագրի շրջանակներում ընտրված ուսումնական հաստատություններում կազմակերպվել են նաև թրաֆիքինգի թեմաներով միջոցառումներ երեխաների և մեծահասակների համար՝ թատերական բեմականացում, շարադրությունների մրցույթ, ֆոտոցուցահանդես և այլն: Ծրագրի իրականացման ընթացքում առավել մեծ ակտիվություն դրսևորած 9 դպրոցականներ մասնակցել են Վրաստանում կազմակերպված Երիտասարդական համաժողովին, որտեղ հայ և վրացի երեխաները ներկայացրել են թրաֆիքինգի կանխարգելման գործում իրենց ունեցած ակնկալիքները իշխանություններից:

2010թ. հուլիս ամսին ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր՝ «Անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի կանխարգելում» ծրագիրը իրականացնելու նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 30 ուսուցիչների վերապատրաստում «Թրաֆիքինգ» թեմայով: Դասընթացները կազմակերպվել են միաժամանակ Երևանում և Գյումրիում: Նոյեմբեր ամսին վերապատրաստված ուսուցիչները դասեր են վարել աշակերտների համար: Աշակերտների համար կազմակերպվել է նաև «Թրաֆիքինգ» թեմայով ֆիլմի դիտում ու քննարկում:

<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>

2009 և 2010 թվականներին ՀՀ ԱՍՀ նախարարությանը ՀՀ պետական բյուջեից հատկացվել են միջոցներ մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ խնդիրները և այդ ոլորտում նախարարության քաղաքանությունը լուսաբանող հեռուստահաղորդումների պատրաստման համար: Գումարը կազմել է մոտ 1500 եվրո յուրաքանչյուր հաղորդման համար:

ՀՀ ԱՍՀՆ և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի <<Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն>> համատեղ ծրագրի շրջանակներում Երևանում և մարզերում իրականացվել են իրազեկման արշավներ “Թրաֆիքինգի զոհերին աջակցության տրամադրման գործընթացում ներգրավված կողմերի ունակությունների բարձրացում և կարողությունների հզորացում” թեմայով, որի շրջանակներում խոսվել է թրաֆիքինգի վերաբերյալ ազգային և միջազգային օրենսդրության, ազգային ուղղորդման կարգի իրականացման, թրաֆիքինգի զոհերի նույնացման/իդենտիֆիկացման և պրոֆիլավորման էության, թրաֆիքինգի զոհերի նույնացման և նրանց աջակցության տրամադրման և ինտեգրման գործընթացի մասին:

Քարոզարշավները, որոնք ավարտվելու են 2011 թ-ի հունիսին, բաղկացած են մի քանի փուլերից: Առաջին փուլին մասնակցել են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, տարածքային կառավարման մարմինների, <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության մարզային ծառայությունների, ոստիկանության մարզային բաժինների ներկայացուցիչները, տեղի լրատվամիջոցները (այդ թվում և մարզային հեռուստաալիքները), խոցելի խմբերի հետ աշխատող տեղի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Մասնակիցներին բաժանվել են թրաֆիքինգի հիմնախնդրին վերաբերող նյութեր, ներառյալ ազգային օրենսդրությունը և Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը, ներկայացվել են վիճակագրական տվյալներ հանրապետությունում առկա իրավիճակի մասին, վերլուծություններ թրաֆիքինգի գործերով դատավարությունների, թրաֆիքինգի զոհերի, որպես սոցիալական խումբ, խնդիրների, նրանց բնութագրերի, երևույթի տարածման պատճառների վերաբերյալ:

Երկրորդ փուլի նպատակային խումբը կազմել են երեխաների ցերեկային հոգածության կենտրոնների աշխատակիցները: Նախապես ուսումնասիրվել և գնահատվել են կենտրոնների կարիքները մարդկանց, հատկապես երեխաների, թրաֆիքինգի հետ կապված խնդիրների իմացության առումով, որից հետո կազմվել է ուսուցման ծրագիրը և անց են կացվել դասուսուցումներ:

Երրորդ փուլում ներգրավված են հանրապետության սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, աշխատանքի պետական տեսչության տարածքային ստորաբաժանումները, զբաղվածության գործակալության մարզային և տարածքային մարմինները և ոստիկանության աշխատակիցները:

Նախարարությունը, համագործակցելով "Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն" ծրագրի և "Հույս և օգնություն" մասնագիտացված ՀԿ-ի հետ, Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպել է սեմինար "Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանությունը մարդկանց շահագործման դեմ պայքարի համատեքստում" թեմայով:

Համատեղ ծրագրի շրջանակներում սեմինար է կազմակերպվել նաև ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների համար:

Բոլոր վերլուծությունները տեղադրված են նախարարության http://www.mss.am կայքէջում:

Բացի այդ, ՀՀ ԱՍՀ նախարարությունը մեկնարկել է 2010-2012թթ. Ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ օրենսդրության կատարելագործման, թրաֆիքինգի կանխարգելման, զոհերի աջակցության ուղղությամբ /կետեր 1.1.1, 2.1.3., 2.2.3., 2.2.5.[1], 2.3.5./:

ՀՀ առողջապահության նախարարություն

Հասարակության իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կազմակերպությունների մասնագետների իրազեկմանը ուղղված սեմինարներ՝ <<թրաֆիքինգ>> երևույթի, թրաֆիքինգի զոհերի հետազոտման ու հիվանդանոցային բուժման կազմակերպման, ինչպես նաև ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի առնչությամբ: Սեմինարներին մասնակցել են առողջապահության կազմակերպիչներ, բժիշկներ, բուժքույրեր: Վերապատրաստված մասնագետները տեղերում կապահովեն հասարակության իրազեկումը:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

2009 թվականի հուլիսի 27-30-ը Երևան քաղաքում կազմակերպված սեմինար-դասընթացով («Ուսուցում ուսուցանողների համար» մեթոդով դասընթացներ) մեկնարկել է «Երիտասարդության դերը մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ կանխարգելման գործում» ծրագիրը և շարունակվել է ՀՀ մարզերում՝ երևանյան դասընթացների մասնակիցների կողմից կազմակերպվող սեմինար-դասընթացների տեսքով: Վերոնշյալ ծրագրի ֆինանսավորումն իրականացվել է պետական բյուջեից՝ 2502800 դրամ գումարի չափով: Ծրագրին իր ակտիվ աջակցությունն է բերել ՀՀ ԱՍՀՆ և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի <<Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն>> համատեղ ծրագիրը:

Ծրագիրն ավարտվել է դեկտեմբեր ամսին՝ Հայաստանի հանրային հեռուստալիքով դեկտեմբերի 22-ին իրականացված Երևանը և ՀՀ Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերը կապող հեռուստակամուրջ-քննարկումով, որը ֆինանսավորվել է պետական բյուջեից՝ 5.190.860 դրամ գումարի չափով:

2010թ.-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի, Կոտայքի, Իջևանի, Սյունիքի, Լոռու մարզային երիտասարդական կենտրոններում ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության երևանյան

---

[1] մշակվել է <<Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը>> թեմայով ուսումնական մոդուլ, որը ներառվել է ՀՀ քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման դասընթացների ցանկում:

գրասենյակի, Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան առաքելության և «ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ 2010 թվականի ապրիլ-սեպտեմբեր ամիսներին իրականացվել է «Հանցագործության կանխարգելումը և քրեական արդարադատություն: Քրեական արդարադատության հակազդումը մարդկանց թրաֆիքինգին, կապերը միջազգային կազմակերպված հանցագործության հետ» ծրագիրը, որի ֆինանսավորվել է պետական բյուջեից՝ 480. 600 դրամ գումարի չափով: Ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինար-դասընթացների նպատակը երիտասարդների շրջանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելմանն ուղղված տեղեկացվածության մակարդակի բարձրացումն է:

2010 թվականին կազմակերպվել են քննարկումներ, հանդիպումներ, իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի անդամների, փորձագետների, երիտասարդների մասնակցությամբ «Երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի» թեմայով հեռուստահաղորդման պատրաստման և Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ հեռարձակման աշխատանքներ, որի ֆինանսավորումն իրականացվել է պետական բյուջեից՝ 3.350.300 դրամ գումարի չափով:

<u>ՀՀ դատախազություն</u>

Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով ՀՀ դատախազության պաշտոնական կայքում լուսաբանվել են թրաֆիքինգի գործերով դատախազության կողմից կատարված աշխատանքները: Բացի այդ <<<2>> հեռուստաընկերության <<<Հետաքննություն>> հաղորդաշարով, դատախազության աշխատակիցների մասնակցությամբ, ներկայացվում են թրաֆիքինգի դեպքերով քննված քրեական գործերի վերաբերյալ հաղորդումներ:

ՀՀ դատախազության աշխատակիցների կողմից ՀՀ գլխավոր դատախազության <<Օրինականություն>> գիտագործնական հանդեսում թրաֆիքինգի թեմայով հրապարակվել են մի շարք գիտական հոդվածներ:

Դատախազության աշխատակիցները, որպես փորձագետներ, մասնակցում են թրաֆիքինգի թենայով կազմակերպված բազմաթիվ սեմինարների, դրանցում հանդես են գալիս զեկուցումներով, ելույթներով:

<u>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</u>

2009-2010 թվականների ընթացքում հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության հետ փոխհամագործակցությամբ 3 անգամ <<02>> շաբաթաթերթի և 2 անգամ հեռուստածրագրի միջոցով անդրադարձ է կատարվել թրաֆիքինգի խնդրին: Նյութեր են տեղադրվել police.am կայքում: ՀՀ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների աշխատակիցների մասնակցությամբ նկարահանվել են հաղորդումներ <<Երկիր Մեդիա>>, <<<Հ2>>, <<<Հ1>>, <<Կենտրոն>>, <<Շանթ>>, <<Ա1+>> ընկերությունների կողմից, որոնք բազմաթիվ անգամ ցուցադրվել են տարբեր հեռուստաընկերություններով: Հաղորդում է կազմակերպվել նաև <<Ազատություն>> ռադիոկայանով: ՀՀ ոստիկանության ղեկավարությունը մամլո ասուլիսների ընթացքում բազմիցս անդրադարձել է թրաֆիքինգի դեմ տարվող պայքարին: ԱՄԷ-ում ՀՀ դեսպանատան միջոցով նյութեր են տրամադրվել ԱՄԷ ԶԼՄ-ներին: Մի շարք հարցազրույցներ և նյութեր են տրամադրվել նաև այլ լրատվական միջոցներին:

ՄԱԶԾ հետ համագործակցությամբ պատրաստվել են սահմանային անցակետերում ռիսկային խմբերում տարածելու նպատակով կախազարդեր՝ ոստիկանության, հյուպատոսական ծառայությունների և ՀԿ-ների թեժ գծերի վերաբերյալ տեղեկատվությամբ:

<u><<Դեմոկրատիան այսօր>> ՀԿ</u>

<<Դեմոկրատիան այսօր>> ՀԿ-ն համագործակցելով <<ԱՄՔՈՐ>> կազմակերպության հետ՝ սկսած 2009թ.-ի սեպտեմբերից համատեղ իրականացնում է <<<Հայաստանում կատարելագործել զոհերի

աջակցությունը և բարելավել մարդկանց շահագործման կանխարգելումը>> ծրագիրը: Ծրագրի նպատակն է Հայաստանում բարելավել մարդկանց շահագործման դեմ ուղղված կանխարգելիչ միջոցառումները ու նպաստել զոհերի ավելի արդյունավետ հայտնաբերման, նույնացման և աջակցության համար ուղղորդման ու վերաինտեգրման գործընթացին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

1. *Հակաթրաֆիքինգային պայքարում մարզային ՀԿ-ների կարողությունների զարգացման նպատակով* Հայաստանի բոլոր մարզերում ընտրվել են ՀԿ-ներ, որոնք աշխատում են բնակչության խոցելի խմբերի հետ և նրանց ներկայացուցիչների համար Երևանում կազմակերպվել է երկօրյա դասընթաց, որի ժամանակ 24 մասնակցի՝ 14 մարզային ՀԿ-ներից ուսուցանվել է զոհերի հայտնաբերման, նույնացման և աջակցության համար ուղղորդման գործընթացները: Ինչպես նաև ներկայացվել են Հայաստանում մարդկանց շահագործման զոհերին տրամադրվող աջակցության ծրագրերի հնարավորությունները: Մշակվել են հետագա համագործակցության եզրեր՝ իրազեկման ծրագրերի և զոհերի աջակցության համար ուղղորդման գործընթացի իրականացման համար:

2. *Գյուղական համայնքներում և տեղական իշխանությունների շրջանում իրազեկության բարձրացման նպատակով* <<Դեմոկրատիան այսօր>> ՀԿ-ի ներկայացուցիչները այցելել են Հայաստանի մարզերի 18 գյուղեր՝ Նալբանդյան, Արևիկ, Փյունիկ, Արտավազ, Նորադուզ, Մարմարիկ, Վարդահովիտ, Արտավան, Գողտունիք, Հերհեր, Աջաջուր, Սև քար, Արազապ, Արտանիշ, Նորամարգ, Սիս, Վանատուր, Կաղսի: Տեղական իշխանությունների հետ քննարկվել են գյուղից արտագաղթի դեպքերը, մարդկանց շահագործման դեմ ուղղված կանխարգելիչ միջոցները և զոհերին տրամադրվող աջակցության ծրագրի հնարավորությունները:

3. *Մարդկանց շահագործման կանխարգելման նպատակով խոցելի խմբերի իրազեկման բարձրացում:* Նշված ժամանակահատվածում մարդկանց վաճառքի կանխարգելման նպատակով բնակչության իրազեկման բարձրացման համար անցկացվել է 15 սեմինար: Երևանում <<Մանանա>> կրթամշակութային կենտրոնի սաների, Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի և 2 սեմինար՝ Երևանի պետական համալսարանի ուսանողների համար: Վայքում <<Հույս 98>> ՀԿ-ի և Արտաշատում <<Հայտուր>> ՀԿ-ի շահառուների, ինչպես նաև Մարմարիկ, Նալբանդյան, Սիփանիկ, Արազապ, Սև քար, Ռանչպար գյուղերի բնակիչների համար: Սեմինար է անցկացվել նաև <<Դեմոկրատիան այսօր>> ՀԿ-ի գրասենյակում՝ մարզերի երիտասարդների համար: 2 սեմինար է կազմակերպվել Հրազդանի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և Գյումրիի երեխաների սոցիալական աջակցության կենտրոնի հետ համատեղ: Սեմինարի մասնակիցները ծանոթացվել են թրաֆիքինգի հիմնապատճառների և նրա կանխարգելման միջոցների հետ, հատկապես ընդգծվել են ռիսկային գործոնը երիտասարդների համար, ներկայացվել են միջազգային փաստաթղթերը և ՀՀ կառավարության կողմից ընդունված ծրագիրը: Բաժանվել են 'թեժ գծի' հայտարարագրեր, բուկլետներ, թրաֆիքինգի կանխմանն ուղղված անձնագրային ներդիրներ:

<u><<Հույս և օգնություն>> ՀԿ[2]</u>

Հայաստանի Լոռի, և Արագածոտն մարզերի փոքր քաղաքներում՝ Ալավերդի, Ստեփանավան, Թալին, Ապարան և Արթիկ իրականացվել է 5 սեմինար-վարժանքներ, որոնց մասնակցել են տեղի ոստիկանության 75 աշխատակիցներ /տեղամասային տեսուչներ, օպերլիազորներ/, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ 13, սոցիալական զբաղվածության կենտրոնների աշխատակիցներ՝ 5 և տեղական ինքնակառավարման մարմինների 2 ներկայացուցիչ: Սեմինար-վարժանքների նպատակն էր բարձրացնել ոստիկանության աշխատակիցների իրազեկությունը թրաֆիքինգի միջազգային և ՀՀ օրենսդրության

[2] Հույս և Օգնություն ՀԿ ծրագրերի իրականացմանը իր մասնակցությունն են բերել նաև ՀՀ ԱՍՀ նախարարությունը և ԹՊԱՌԿ ծրագիրը:

վերաբերյալ, ծանոթացնել <<Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ զոհերի ազգային ուղղորդման կարգի>> դրույթներին:

Մշակվել և հրատարակվել են հուշաթերթեր 6000 օրինակ տպաքանակով ՝ ՌԴ մեկնող միգրանտների համար <<Ի՞նչ պետք է իմանա Ռուսաստանի Դաշնություն մեկնողը>>, որտեղ ընդգրկվել են նյութեր ՌԴ միգրացիոն օրենսդրությունից, մանրամասն տեղեկություններ ՌԴ-ում աշխատելու կարգի վերաբերյալ, ինչպես նաև օգտակար հեռախոսահամարներ և հասցեներ ՌԴ-ում դժվար իրավիճակներում հայտնված անձանց համար: Հուշաթերթերը տարածվել են Հայաստանի 12 ավիագործակալություններում, <<Զվարթնոց>> օդանավակայանում, հասարակական կազմակերպություններում, սեմինարների մասնակիցների միջև:

Օգնության հեռախոս անվճար հեռախոսահամարը գովազդվել է վազող տողով <<Երկիր Մեդիա>> հեռուստաալիքով և <<Գինդ>> շաբաթաթերթում:

Մարդը դժբախտության մեջ (“People in Need”) կազմակերպության հետ համատեղ իրականացվել է <<*Տեղեկացվածության արդյունավետության բարձրացում և համապատասխան ցանցերի ստեղծման միջոցով ՀՀ-ում երեխաների թրաֆիքինգի կանխարգելման համախմբված և հզորացված համակարգի ստեղծում*>> ծրագիրը: Ծրագրի շրջանակներում <<Հույս և օգնություն>> ՀԿ-ն իրականացրել է 5 սեմինար՝ <<Երեխաների թրաֆիքինգի կանխարգելում և աջակցության կազմակերպում, երեխաների իրավունքների պաշտպանության մասնագետների հմտությունների և կարողությունների զարգացում>> թեմայով: Սեմինարներին մասնակցել են Հայաստանի 10 մարզերի /Արարատ, Արմավիր, Վայոց Ձոր, Սյունիք, Արագածոտն, Շիրակ, Լոռի, Տավուշ, Կոտայք, Գեղարքունիք/ մարզային ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների մասնագետները և համայնքային խնամակալության ու հոգաբարձության մարմինների անդամները: Յուրաքանչյուր սեմինարին մասնակցել են երկու մարզերի մասնագետներ: Արդյունքում՝ 100 մասնագետներ ձեռք են բերել համապատասխան գիտելիքներ երեխաների թրաֆիքինգի կանխարգելման և երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ, ձևավորել են ներմարզային համագործակցության ցանցեր:

Երեխաների թրաֆիքինգի կանխարգելման և երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են նաև 3 կլոր սեղան-քննարկումներ լրագրողների համար:

Պատրաստվել են համակարգչային սկավառակներ (CD), որտեղ զետեղված են <<Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտը կարգավորող ՀՀ և միջազգային օրենսդրությունը>>, որոնք տրամադրվել են սեմինարների մասնակիցներին:

Պատրաստվել և հրատարակվել են էջանիշներ <<Ճանաչիր քո իրավունքները>>՝ 4200 օրինակ, պատրաստվել են կախազարդեր <<Ճանաչիր քո իրավունքները>>՝ 1050 օրինակ և <<Ճանաչիր քո իրավունքները-1>>՝ 1250 օրինակ, որոնք տրամադրվել են դպրոցականներին՝ նրանց հետ դպրոցներում թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկմանը ուղղված միջոցառումների ժամանակ:

Կազմվել է <<197 հարց և պատասխան երեխաների իրավունքների պաշտպանության և թրաֆիքինգի վերաբերյալ>> ձեռնարկը, որը կհրատարակվի 2011թ:

<<Մարդը դժբախտության մեջ>> (<<People In Need>>) ՀԿ

«Մարդը դժբախտության մեջ» չեխական բարեգործական հասարակական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը 2009 թվականից Եվրամիության և Չեխիայի կառավարության ֆինանսավորմամբ իրականացնում է «Տեղեկացվածության արդյունավետության բարձրացում և համապատասխան ցանցերի ստեղծման միջոցով Հայաստանի Հանրապետությունում երեխաների թրաֆիքինգի կանխարգելման համախմբված և հզորացված համակարգի ստեղծում» ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում 2010 թվականին ՀՀ մարզերում և Երևան քաղաքում իրականացվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև կազմակերպվել են դասընթացներ հանրապետության հատուկ դպրոցների մասնագետների համար: Յուրաքանչյուր հատուկ դպրոցից վերապատրաստվել է մեկական մասնագետ (հոգեբան, սոց.աշխատող, մանկավարժ): Որպես ուսուցողական նյութ օգտագործվել են ՄՄԿ-ի կողմից մշակված «Թրաֆիքինգ» ձեռնարկները: Դասընթացներին մասնակցել են 317 մանկավարժներ հանրապետության 249 դպրոցներից:

Կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԹՊԱՌԿ ծրագրի հետ՝ <<*Տեղեկացվածության արդյունավետության բարձրացում և համապատասխան ցանցերի ստեղծման միջոցով Հայաստանի Հանրապետությունում երեխաների թրաֆիքինգի կանխարգելման համախմբված և հզորացված համակարգի ստեղծում*>> ծրագրի շրջանակներում 2010թ. իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Ուսուցում

Վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի 227 դպրոցների 313 ուսուցիչների և 24 հատուկ դպրոցների 24 ուսուցիչների հետ: Հատուկ դպրոցների վերապատրաստված ուսուցիչներն իրենց հերթին դասընթացներ են կազմակերպել իրենց դպրոցների ընդհանուր առմամբ 700 մասնագետների և 860 երեխաների հետ:

Վերապատրաստվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մանկատների և ցերեկային, գիշերային խնամքի կենտրոնների 22 մասնագետ (հոգեբան, սոց.աշխատող, մանկավարժ), որոնք էլ իրենց հերթին դասընթացներ են կազմակերպել իրենց հաստատությունների ողջ մասնագիտական անձնակազմի համար: Ծրագրի շրջանակներում դասընթացներ են կազմակերպվել նաև վերոնշյալ հաստատությունների 392 երեխաների հետ:

Իրազեկում

Հույս և Օգնություն ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել են կլոր-սեղան քննարկումներ լրագրողների համար հետևյալ թեմաներով՝ 1. <<Սեռական բռնությունները երեխաների նկատմամբ>>, 2.<<Երեխաների աշխատանքը ՀՀ-ում>>, 3.<<Որդեգրման և թրաֆիքինգի հիմնախնդիրները>>:

Հայտարարվել է լրագրողական մրցույթ <<Երեխաների թրաֆիքինգի հիմնախնդիրները ՀՀ-ում>>: Մրցույթին մասնակցել է 13 լրագրող, որից 6-ը ստացել է մրցանակ:

2010թ. ստեղծվել է 90 վայրկյան տևողությամբ սոցիալական հոլավակ, որը մեկ ամիս շարունակ հեռարձակվել է 10 մարզային և 3 երևանյան հեռուստաընկերություններով: Տպագրվել է կոմիքսների գրքույկ երեխաների համար, կպչուն թերթիկներ, պաստառներ:

Տպագրվել է նաև 2009թ. իրականացված “Երեխաների թրաֆիքինգը Հայաստանում. հանրային իրազեկվածություն” թեմայով հետազոտության արդյունքներն ամփոփող հաշվետվությունը՝ անգլերեն և հայերեն լեզուներով:

«ԱՄՔՈՐ»-ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԿ

Իրազեկության բարձրացում

Բնակչության շրջանում թրաֆիքինգի հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով <<ԱՄՔՈՐ>>-ը մշակել և հրատարակել է բուկլետներ, թերթոններ, պաստառներ և էջանշաններ, ուր տեղ են գտել համապատասխան հղումներ, ուղերձներ և տեղեկատվություն աշխատանքային միգրացիայի, դրա հետևանքների և թրաֆիքինգի հնարավոր ռիսկերի վերաբերյալ: Նյութերը բաշխվել են հանրապետության ողջ տարածքում:

2010 թ. մարտ և ապրիլ ամիսներին իրականացվել է «Վերադարձ տուն» տեսաֆիլմի ձայնագրման և բազմացման աշխատանքները հայերեն և անգլերեն լեզուներով: Սույն տեսաֆիլմը ստեղծվել էր «ԱՄՔՈՐ»-ի, «Հայ միասնության խաչ» տեղական ՀԿ-ի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կազմակերպությունների համագործակցության արդյունքում: Ընդհանուր առմամբ պատրաստվել է 340 օրինակ (270՝ հայերեն և 70՝ անգլերեն): Ֆիլմը ստեղծվել է թրաֆիքինգի զոհերի իրական պատմությունների հիման վրա, որում նկարագրվում են տարբեր իրավիճակներ, երբ մարդիկ դառնում են խաբեության, հարկադիր աշխատանքի և սեռական շահագործման զոհ: Ֆիլմը ներկայացնում է եկեղեցու հոգևոր աջակցության դերը թրաֆիքինգի զոհերին՝ օգնելով նրանց շարունակել ապրել և հավատ ներշնչել ապագայի կառուցման հարցում: Տարբեր գործակալությունների խնդրանքով բազմացվել է նաև «Մարդավաճառություն» տեսաֆիլմը՝ հայերեն լեզվով՝ 60 օրինակ քանակով:

Մայիս ամսին «Վերադարձ տուն» տեսաֆիլմի հայերեն և անգլերեն տարբերակները տրամադրվել են պետական կառույցներին, տեղական ՀԿ-ներին և միջազգային կազմակերպություններին:

Մարզերում իրազեկության բարձրացման գործընթացն իրականացվում է «Դեմոկրատիան այսօր» տեղական ՀԿ-ի միջոցով՝ «Հայաստանում թրաֆիքինգի զոհերի աջակցության բարելավում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում: Համատեղ գործունեության վերավերյալ տեղեկատվությունը ներկայացված է «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի հաշվետվության հատվածում:

«Հայաստանում թրաֆիքինգի զոհերի աջակցության բարելավում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում հուլիսի 26-27-ին «ԱՄՔՈՐ»-ը կազմակերպել է «Զոհերի իրավունքները առաջնային են» վերնագրով միջազգային կոնֆերանս՝ նվիրված թրաֆիքինգի զոհերի պաշտպանությանը և վերաինտեգրմանը, որի նպատակն է միջազգային համագործակցության ստեղծումը թրաֆիքինգի դեպքերի վաղաժամ կանխման և զոհերի պաշտպանությունը ժամանակին կազմակերպելու համար: Կոնֆերանսին հրավիրվել էին տեղական և միջազգային ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների, պետական կառույցների, ինչպես նաև Թուրքիայում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Ռումինիայում և այլ երկրներում զոհերի պաշտպանության հարցերով զբաղվող գործընկերներ:

<u>Հայ օգնության միություն /ՀՕՄ/</u>

2009-2010թթ.-ին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF), ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (UNHCR) և ՀՕՄ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն ՀՕՄ-ը իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն և ծննդի պետական գրանցում չունեցող երեխաների հայտնաբերման և ուղղորդման ծրագիր:

Ծրագիրն իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման, արտաքին գործերի, աշխատանքի և սոցիալական հարցերի, արդարադատության, առողջապահության նախարարությունների, ինչպես նաև ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ սերտ համագործակցությամբ:

Հետազոտության նպատակն էր ծննդի պետական գրանցում չստացած երեխաների բացահայտումը, հիմնախնդրի պատճառների, դրսևորման ձևերի և հետևանքների վերլուծությունը, ամփոփ վիճակագրական տվյալների ստեղծումը և դրա հիման վրա հետագա կանխարգելման ռազմավարության մշակումը: Երևան քաղաքում, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում 1330 տնային տնտեսություններում հարցազրուցավարների կողմից թվով 97 ընտանիքներում հայտնաբերվել է 126 ծննդի պետական գրանցում չստացած երեխա, իսկ ՀՀ մանկական խնամակալական հաստատություններում՝ 19 երեխա: 2010թ.-ի ընթացքում հայտնաբերված երեխաներից 117-ը ստացել են ծննդյան վկայականներ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Նյու Յորքի կենտրոնական գրասենյակի կողմից ծրագիրը գնահատվել է որպես, ընդհանուր առմամբ, երեխայի իրավունքների պաշտպանության և, մասնավորապես, թրաֆիքինգի կանխարգելման գործում լուրջ ներդրում:

2004-2005թթ. ԱՄՆ դեսպանության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, իսկ 2008-2009թթ. «People in Need» կազմակերպության ֆինանսական աջակցության շնորհիվ, ՀՕՄ-ը իրականացրել էր սոցիոլոգիական հետազոտություններ, որոնց նպատակն էր պարզել թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության մակարդակը Հայաստանում գործող հատուկ դպրոցների ու մանկատների, ինչպես նաև հանրակրթական դպրոցների

սաների շրջանում, միևնույն ժամանակ բացահայտել այս երեխաների հետ տեղի ունեցած թրաֆիքինգի դեպքերը:

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից, ՀՀ գիտության և կրթության նախարարության հետ համագործակցելով, հանրակրթական դպրոցներում «People in Need» կազմակերպության կողմից իրականացվել են իրազեկության բարձրացման համապարփակ ծրագրեր: ՀՕՄ-ը Հայաստանում գործող իր 53 մասնաճյուղերի օգնությամբ իրականացրել է մոնիտորինգային ծրագիր, որի շրջանակներում, օգտագործելով շարադրությունը որպես աշխատանքային գործիք, բացահայտել է մանկավարժների վերապատրաստման դասընթացների և սեմինարների արդյունավետությունը: Ծրագիրն իր հերթին կրել է երևույթի վերաբերյալ իրազեկման տարրեր: Որպես եզրափակիչ փուլ, 2011թ.-ի հունվարին կկազմակերպվի մրցանակաբաշխություն և արդյունքների մասին հանրության իրազեկում՝ հեռուստատեսային բարձր վարկանիշ ունեցող և մանկապատանեկան հաղորդումներով:

Մամուլի, մասնավորապես հեռուստատեսության դերն այս հարցում կարևոր է, որը, ըստ հարցման արդյունքների, հետազոտության մասնակիցների շրջանում վստահելի տեղեկատվության առաջնային աղբյուր է համարվում: Քանի որ ՀՀ մարզերում տեխնիկական պատճառներով առավել քիչ թվով հեռուստահաղորդումներ են դիտում թրաֆիքինգի երևույթի մասին, ՀՕՄ-ի մասնաճյուղերի օգնությամբ, համագործակցելով տեղական/մարզային հեռուստաալիքների հետ, հեռարձակվել են իրազեկման տարրեր կրող հաղորդումներ:

“Ղ-տելեկոմ” ընկերության հետ բանակցությունների արդյունքում՝ ՀՕՄ-ի աշխատակազմի կողմից մշակվում է սոցիալական գովազդի սյուժե, որը կանդրադառնա թրաֆիքինգի դեմ պայքարի որոշակի ոլորտների, ինչպիսիք են կանխարգելումը, պաշտպանությունը և զոհերին տրամադրվող օժանդակությունը:

<<Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա>> ՀԿ

2010թ.-ի ընթացքում իրականացվել են հետևյալ ծրագրերը և միջոցառումները:

01.01.10-30.09.10 «www.antitrafficking.am ինտերնետային կայքի պահպանում և զարգացում» - ՄԱԿ-ի զարգացման ծրագրի՝ Հայկական կարմիր խաչի ընկերությանը տրամադրված դրամաշնորհի միջոցով: Հոկտեմբեր ամսվանից մինչև տարեվերջ կայքը պահպանվել և թարմացվել է «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի սեփական միջոցներով:

Ծրագրի շրջանակներում նորացվել և զարգացվել է www.antitrafficking.am ինտերնետային կայքը նոր պահանջներին համապատասխան:

«Ընդդեմ թրաֆիքինգի տեղեկատվական քարոզարշավ»-ն իրականացվել է Ջինիշյան հիշատակի հիմնադրամի դրամաշնորհով: Ծրագրի շրջանակներում Գորիսի Պոլիտեխնիկական, Վանաձորի Մանկավարժական ինստիտուտների և Երևանի Պետական ճարտարագիտական համալսարանի երիտասարդ ուսանող լիդերների համար կազմակերպվել են սեմինարներ «Ինչպես պայքարել թրաֆիքինգի դեմ» թեմայով:

«Մարդը դժբախտության մեջ» («People-in-Need») կազմակերպության *կողմից իրականացվող* «Ընդդեմ երեխաների թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում մշակվել են երեխաների համար նախատեսված կոմիքսի և սոցիալական հոլովակի սցենարները:

Ասոցիացիայի ներկայացուցիչը մասնակցել է «Հույս և օգնություն» ՀԿ-ի *կողմից* կազմակերպված «Երեխաների աշխատանքը ՀՀ-ում» սեմինարին՝ որպես սեմինարավար: Սեմինարը նպատակ ուներ լրագրողներին ներկայացնել ՀՀ-ում երեխաների աշխատանքի կարգավորման օրենսդրական դաշտը և այն խախտումները, որոնց պատճառով երեխաները ենթարկվում են թրաֆիքինգի:

Տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների համար կազմակերպությունն անվճար տրամադրել է տեսանյութեր, ֆիլմեր, սոցիալական հոլովակներ:

Հարց 23: Նկարագրել թրաֆիքինգի գծով խոցելի համարվող խմբերի սոցիալական և տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ նախատեսվող կամ արդեն իսկ ձեռնարկված քայլերը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2010 թվականի ծրագրի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվել է աջակցություն, որը նաև հանդիսանում է թրաֆիքինգի գծով խոցելի խմբերի սոցիալական և տնտեսական վիճակի բարելավման միջոց: Ծրագիրն ունի շարունակական բնույթ:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 21.01.2010թ. թիվ 54-Ն որոշմամբ հաստատված Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2010 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից 2010 թվականի ընթացքում բավարարվել է 8379 աջակցության հայտ, այդ թվում՝ 4523 կանանց՝ ծրագրային հետևյալ ուղղություններով.

Աջակցության ուղղությունները	2010թ.-ի ընթացքում բավարարված աջակցության հայտերի քանաքը	Այդ թվում կականց քանակը
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	6872	3840
Սկսնակ գործարարներին աջակցություն	130	42
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	30	3
ՈՒսուցողական աջակցություն	1266	620
Թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն	49	13
Վարկային երաշխավորությունների տրամադրում	13	1
ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում	3	1
Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	16	3
Ընդամենը	**8379**	**4523**

2010թ.-ին ՀՕՄ-ի ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև վերաստորագրվել է համագործակցության մասին պայմանագիր՝ «Աջակցություն և խորհրդատվություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում:

2006թ.-ից առ այսօր ծրագրի շրջանակներում ներգրավված է եղել 223 շահառու: Պայմանագրի համաձայն 1 տարվա ընթացքում նախատեսված աշխատանքների ցանկով ՀՕՄ-ը իրականացրել է հետևյալ գործողությունները .

1.մանկատան շրջանավարտների ուսումնասիրություն, անհատական ծրագրերի կազմում, 2. բնակարանների նոտարական և կադաստրային ձևակերպումներ, 3. մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում, 4.հիմնական կարիքները բավարարող եկամտի ապահովում, 5. բժշկական օգնության տրամադրում, բժշկական խորհրդատվություն, 6. իրավաբանական աջակցության տրամադրում,

7. սոցիալ-հոգեբանական աջակցություն, 8. ծրագրի իրականացման ապահովման համակարգման աշխատանքներ:

2009թ.-ին ծրագրի շահառուներին ՀՀ կառավարության կողմից տրամադրվել է թվով 37 բնակարան՝ 10 տարի անվարձահատույց օգտագործման իրավունքով: Ընդհանուր առմամբ, 2003-2010 թթ. ծրագրի իրականացման ընթացքում շահառուներին տրամադրվել է 152 բնակարան:

Հաշվի առնելով այն փաստը, որ մանկական խնամակալական հաստատությունների շրջանավարտները համարվում են թրաֆիքինգի և այլ բացասական երևույթների տեսանկյունից ռիսկային խումբ, «Աջակցություն և խորհրդատվություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, ինչպես նաև բնակարանների հատկացումը իրականացվում է պետական բյուջեից՝ թրաֆիքինգի կանխարգելման նպատակով:

Կատարվել է լրացում ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշման մեջ, այն է՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը լրացվել է շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանցով: Ազգային ուղղորդման կարգի համաձայն հիվանդների ուղեգրումն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնորդագրերի հիման վրա: Զոհի անձի վերաբերյալ գաղտնիությունը ապահովելու նպատակով նրանց ուղեգրումը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության ուղեգրով:

2010թ. դեկտեմբերին ընդունվել է “Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը”, համաձայն որի օրենքում սահմանված անմրցունակ խմբերի ցանկում ավելացել է “թրաֆիքինգի զոհ” խումբը: Սա լրացուցիչ երաշխիքներ է տալիս զոհերին՝ զբաղվածության հատուկ ծրագրերում ընդգրկվելու համար:

<u>Հարց 24</u>: Կոնվենցիայի 6-րդ գլխում նշված կանխարգելիչ միջոցներից որո՞նք են նախատեսվում կամ արդեն իսկ իրականցվել երկրի կողմից՝ նվազեցնելու թրաֆիքինգի հանգեցնող պահանջարկը:

ՀՀ քրեական օրենսգրքի թրաֆիքինգին վերաբերող հոդվածներում կատարվել են փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 09.04.11թ.-ից: Այդ թվում ավելացվել է 132.3-րդ հոդվածը, որով նախատեսված է քրեական պատասխանատվություն շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելու համար:

Բացի այդ 2010թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի՝ կավատությանը վերաբերող 261-րդ, 262-րդ հոդվածների հատկանիշներով հարուցվել են 31 քրեական գործեր, որոնցով բացահայտվել են հանցագործության 43 դեպքեր: Դեպքերից 1-ը վերաբերվել է Թուրքիա փոխադրելով անձի պոռնկությամբ զբաղվելուն նպաստելուն, 20-ը՝ մահճակալներով սննդի օբյեկտների՝ <<Հյուրանոցային համալիրների>> աշխատակիցների կողմից պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքերին, որից 1-ը անչափահասի օգտագործմամբ, 9 դեպքերը տաքսու վարորդների կողմից պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքերին, իսկ մնացած 13-ը պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու, ներգրավելու այլ դեպքերին, որոնցից 1-ը անչափահասի օգտագործմամբ:

<u>Հարց 25:</u> Նկարագրել երկրի կողմից ձեռնարկված այն քայլերը, որոնք ուղղված են ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի որակական հատկանիշների, անվտանգության և անձեռնամխելիության ապահովմանը՝ նպատակ ունենալով կանխարգելել դրանց ապօրինի պատրաստումն ու շրջանառությունը, ինչպես նաև ապահովելու, որ դրանք հեշտությամբ չկեղծվեն:

Շարունակվում են աշխատանքները կենսաչափական անձնագրերի և էլեկտրոնային նույնականացման քարտերի ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում 2010-2012

թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման Ազգային ծրագրի հավելված 2-ի 1.3.2 կետի՝ կենսաչափական անձնագրերի ներդրման ուղղությամբ, նախագծվել է կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի տեխնիկական առաջադրանքը և 2010 թվականի օգոստոսի 26-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքին հավանություն տալու մասին» N33 ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

<u>Հարց 26</u>: Նկարագրել երկրի կողմից ձեռնարկված այն քայլերը, որոնք ուղղված են երկրի սահմանի վրա թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերմանը, այդ թվում՝ սահմանների հսկողության և հետախուզական գործողությունների իրականացման միջոցով:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության /ՀԱՊԿ/ մասնակից պետությունների լիազոր մարմինների ղեկավարների կոորդինացիոն խորհրդի որոշման համաձայն՝ երրորդ երկրների քաղաքացիների անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի նոր ուղիների հայտնաբերման և հայտնի ուղիների փակման, անձանց և կազմակերպված խմբերի հանցավոր գործունեության կանխման, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կապեր ունեցող կազմակերպված հանցավոր խմբերի վնասազերծման նպատակով ՀԱՊԿ անդամ պետությունների, այդ թվում ՀՀ տարածքում և սահմանային անցակետերում պարբերաբար կազմակերպվում և իրականացվում են համալիր օպերատիվ կանխարգելիչ միջոցառումներ: ՀՀ-ում նշված միջոցառումների կազմակերպչական աշխատանքները համակարգվում են ՀՀ ոստիկանության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կողմից:

Բացի այդ, ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումների աշխատանքը միտված է ձեռք բերելու տեղեկություններ անօրինական միգրացիայի և հնարավոր թրաֆիքինգի կազմակերպիչներին հայտնաբերելուն:

Հսկիչ անցագրային կետերում հատուկ հսկողություն է սահմանվում մարդկանց թրաֆիքինգի առումով <<ռիսկային>> համարվող Երևան-Շարժա-Երևան, Երևան-Դուբայ-Երևան, Երևան-Ստամբուլ-Երևան և Երևան-Թեհրան-Երևան չվերթների, ինչպես նաև ՀՀ ցամաքային սահմանով Վրաստանի Հանրապետության տարածքով Թուրքիայի Հանրապետություն մեկնող և հակառակ ուղղությամբ ժամանող ուղևորահոսքի նկատմամբ:

ՀՀ արտաքսված քաղաքացիների հետ ՀՀ պետական սահմանի անցման կետերում մշտապես իրականացվում են հարցումային աշխատանքներ՝ հնարավոր թրաֆիքինգի դեպքերի բացահայտման նպատակով:

<u>Հարց 27:</u> Նկարագրել ձեռնարկված այն քայլերը, որոնք ուղղված են արտերկրում ՀՀ հյուպատոսությունների և դեսպանատների միջոցով երկրի տարածք մուտք գործելու և կացության արտոնագրված ռեժիմի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը՝ նպատակ ունենալով ապահովել տեղեկացված և օրինական ներգաղթ:

ՀՀ մուտքի վիզա, ՀՀ վերադարձի վկայական, ՀՀ-ում հատուկ կացության կարգավիճակ և ՀՀ քաղաքացիություն ստանալու վերաբերյալ սպառիչ տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ ԱԳՆ, ինչպես նաև ՀՀ դեսպանությունների և հյուպատոսությունների կայքէջերում: Այն հասանելի է նաև ՀՀ դեսպանություններում և հյուպատոսություններում, որտեղ ցանկացողների համար նախատեսված է նաև խորհրդատվության տրամադրում:

<u>Հարց 28</u>: Նկարագրել ձեռնարկված այն քայլերը, որոնք ուղղված են մուտքի արտոնագրերի (ճամփորդական, աշխատանքային, ուսանողական և այլն) մերժմանը այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան պնդելու, որ անձը հանդիսանում է թրաֆիքինգի հնարավոր զոհ կամ դրանում ներքաշված անձ: Նշել, թե նման դեպքերում երկրի իրավապահ մարմիններն ինչպիսի կոնկրետ գործողությունների իրականացման լիազորությամբ են օժտված:

Համաձայն «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /8-րդ հոդված, 1-ին մաս/, օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է իրականացնել մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) և (կամ) անօրինական սահմանահատումներ: Այս առումով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը համագործակցում է թրաֆիքինգի դեմ պայքարում ընդգրկված պետական այլ մարմինների հետ:

ՀՀ Ազգային անվտանգության մարմինների կողմից իրականացվում են թրաֆիքինգի հնարավոր զոհ կամ դրանում ներքաշված անձանց մուտքի արտոնագրեր տրամադրելու կամ մերժելու գործընթացները: Թրաֆիքինգի հնարավոր զոհ կամ դրանում ներքաշված անձ հայտնաբերվելու դեպքում ազգային անվտանգության մարմինների կողմից ձեռնարկվում են համապատասխան օպերատիվ-հետախուզական աշխատանքներ թրաֆիքինգի նախանշաններով հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ:

Հարց 29: Արդյո՞ք առկա են երկրի ներսում թրաֆիքինգի դեպքերի կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցներ՝ հակազդելու համար նաև հատուկ համաձայնագրերի հիման վրա (օրինակ՝ Շենգենյան համաձայնագիր) ընդհանուր սահմաններ ունեցող Կողմերի տարածքներում կատարվող թրաֆիքինգի դեպքերին:

տես՝ Հարց 22-ի և 26-ի պատասխանները

<u>Հարց 30:</u> Ի՞նչ ֆինանսական միջոցներ են հատկացվել վերոնշյալ կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկման համար պետական (կենտրոնական և (կամ) համայնքային) բյուջեից: Գումարն անհրաժեշտ է արտացոլել եվրոյով:

տես՝ Հարց 22-ի և 39-ի պատասխանները

<u>Հարց 31</u>: Արդյո՞ք երկրի կողմից իրականացվել է նման միջոցառումների ձեռնարկման ազդեցության գնահատում: Դրական պատասխանի դեպքում՝ ներկայացնել գնահատման արդյունքները:

տես՝ Հարց 22-ի պատասխանը

Բաժին II.2. Թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության ու առաջմղման ուղղությամբ ձեռնարկվող քայլեր

Այս բաժնում տեղ գտած հարցերը նպատակ ունեն վեր հանել տեղեկատվություն Կոնվենցիայի մասնակից պետությունների ձեռարկած այն քայլերի վերաբերյալ, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 3-րդ գլխով (10-րդ և 17-րդ հոդվածներ) և ուղղված են թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանությանն ու առաջմղմանը: Հարցաշարի այս մասը վերաբերում է զոհերի նույնացման եղանակներին ու ընթացակարգերին (10-րդ հոդված), զոհերին աջակցություն ցուցաբերելու միջոցներին (12-րդ հոդված), վերականգնման և խորհրդատվելու ժամանակահատվածին (13-րդ հոդված) և կացության իրավունքի տրամադրմանը (14-րդ հոդված): Բացի այդ, նախատեսված են որոշակի հարցեր նաև զոհերի հայրենադարձության և վերադարձի (16-րդ հոդված), հասարակությանը վերահնտեգրման (16-րդ հոդվածի 5-րդ կետ), ինչպես նաև փոխհատուցման (15-րդ հոդված) վերաբերյալ:

Հարցեր.

<u>Հարց 32</u>: Ո՞ր պահին և ու՞մ կողմից է ձեռնարկվում թրաֆիքինգի հնարավոր զոհի նույնացման գործընթացը (օրինակ՝ հնարավոր զոհի հայտարարություն, ոստիկանության աշխատակցի արձանագրություն, ՀԿ-ի կողմից տրված տեղեկանքի հայտարարություն և այլն):

Թրաֆիքինգի հնարավոր զոհի նույնացման գործընթացը սկսվում է նրա հայտնաբերման պահից, հայտնաբերող մարմնի կողմից:

Համաձայն մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի նույնացում իրականացնող մարմիններն են՝

1) համագործակցող ՀԿ-ները,

2) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը,

3) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,

4) դատարանները:

Նույնացման գործընթացը կարող է սկսվել հնարավոր զոհի հայտարարության, իրավապահ մարմինների օպերատիվ տեղեկատվության, ՀԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության և այլ հիմքերի առկայության դեպքում:

<u>Հարց 33:</u> Արդյո՞ք ներքին օրենսդրությամբ սահմանված են թրաֆիքինգի զոհի իրավական կարգավիճակ տալու ընդհանուր չափանիշներ: Դրական պատասխանի դեպքում՝ մանրամասնել:

Անձը ստանում է թրաֆիքինգի զոհի կարգավիճակ հայտնաբերման և նախնական նույնացման պահից և այդ պահից սկսում է նաև ստանալ մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգով նախատեսված առաջին աջակցության փաթեթը:

Իսկ թրաֆիքինգի զոհին դատավարական կարգավիճակ տալու հարաբերությունները սահմանվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որի համաձայն տուժող է ճանաչվում այն անձը, ում հանցագործությամբ անմիջականորեն պատճառվել է կամ կարող էր պատճառվել նյութական, բարոյական կամ ֆիզիկական վնաս:

<u>Հարց 34:</u> Ո՞ր պետական մարմինն է թրաֆիքինգի զոհի իրավական կարգավիճակ տալիս (օրինակ՝ ոստիկանությունը, դատախազությունը, դատարանը և այլն): Արդյո՞ք կարող է նման որոշումը բողոքարկվել:

Անձը ստանում է թրաֆիքինգի զոհի կարգավիճակ և իրավապահ մարմնի և այլ հայտնաբերող մարմինների, ներառյալ համագործակցող ՀԿ-ների կողմից: Իսկ անձը տուժող է ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ: Մինչդատական վարույթում տուժող ճանաչելու որոշում կայացնում է քննիչը, դատաքննության ընթացքում՝ դատարանը: Անձին տուժող ճանաչելուց հրաժարվելը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով կարող է բողոքարկվել դատարանում:

<u>Հարց 35</u>: Արդյո՞ք կարող է անձը արտաքսվել երկրից թրաֆիքինգի զոհի նույնացման գործընթացի ընթացքում (օրինակ՝ այն դեպքում, երբ վերջինիս կացությունը երկրում անօրինական է):

Ոչ:

<u>Հարց 36</u>: Արդյո՞ք ներքին օրենսդրությունը ճանաչում է երկրի տարածքում գտնվող անձի՝ այլ Կողմից տրված թրաֆիքինգի զոհի կարգավիճակը:

Այո:

<u>Հարց 37</u>: Ներկայացնել տեղեկատվություն Կոնվենցիայի 12-րդ հոդվածով սահմանված աջակցության տեսակների վերաբերյալ, որոնք երկրում ցուցաբերվում են թրաֆիքինգի զոհերի նկատմամբ: Մանրամասնել, թե ու՞մ կողմից և ի՞նչ տեսակի աջակցություն է ցուցաբերվում:

Աջակցություն թրաֆիքինգի զոհերին ցուցաբերվում է ինչպես մասնագիտացված ՀԿ-ների, այնպես էլ աջակցության հարցում լիազորված պետական կառավարման մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Աջակցության փաթեթը տարբեր է զոհի նույնացման տարբեր փուլերում: Ընդհանուր առմամբ այն ներառում է բնաիրային օգնություն, բուժօգնություն, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն, սոցիալական տարբեր ծրագրերում ընդգրկում, կացարանի տրամադրում:

Հույս և օգնություն ՀԿ-ն տրամադրում է շահառուներին ժամանակավոր կացարան, իրավաբանական աջակցություն, հոգեբանական աջակցություն, բժշկական ծառայություններ, վերականգնողական աջակցություն՝ մասնագիտական ուսուցում և աշխատանքային գործիքների տրամադրում:

«ԱՄՔՈՐ»-ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԿ-ն զոհերին տրամադրում է կացարան, հոգեբանական ու նյութական օգնություն, շտապ բուժօգնություն ստանալու հնարավորություն, անհրաժեշտության դեպքում գրավոր և բանավոր թարգմանության ծառայություններ, զոհերի համար հասկանալի լեզվով խորհրդատվություն և տեղեկատվություն՝ մասնավորապես իրենց իրավունքների և իրենց համար մատչելի ծառայությունների վերաբերյալ, օժանդակություն՝ օրինազանց կողմի դեմ հարուցված քրեական դատավարության համապատասխան փուլերում իրենց իրավունքներն ու շահերը ներկայացնելու և քննարկելու համար, կրթության հասանելիություն երեխաների համար:

<u>Հարց38:</u> Ներկայացնել տեղեկատվություն անդրազգային և ազգային բնույթի թրաֆիքինգի ենթարկված զոհերին ցուցաբերվող աջակցության և պաշտպանության միջոցների տարբերության վերաբերյալ:

Անդրազգային և ազգային բնույթի թրաֆիքինգի ենթարկված զոհերին ցուցաբերվում է նույն կարգի աջակցություն և պաշտպանության միջոցներ: Ի հավելումն, անդրազգային բնույթի թրաֆիքինգի ենթարկված զոհերի համար, ելնելով իրավիճակից, կարող է կազմակերպվել հայրենադարձությունը կամ վերադարձը:

<u>Հարց 39</u>: Արդյո՞ք պետական բյուջեից հատկացվում են միջոցներ աջակցության և պաշտպանության միջոցների համար: Մանրամասնել, թե հատկացվող միջոցներն ինչ ծավալով (եվրոյով), ինչ չափանիշների հիման վրա և ում կարող են տրամադրվել: Նշել նաև այն պետական մարմինների, կառույցների կամ ՀԿ-ների անվանումները, որոնք փաստացի կրում են տարբեր տեսակի աջակցության տրամադրման հետ կապված ծախսերը:

Աջակցության և պաշտպանության միջոցների համար ՀՀ պետական բյուջեով հատկացումներ տրամադրվում են նշված ծառայությունները մատուցող պետական կառավարման մարմիններին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և ՀՀ առողջապահության նախարարությանը:

Հարկ է նշել, որ սկսած 2009 թվականից մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման միջոցառումների գծով ծախսային ծրագրերը առանձին աղյուսակի տեսքով ներառվում են տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեում:

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածով թրաֆիքինգի դեմ պայքարի գծով ծախսերն ըստ առանձին ծրագրերի և դրանք իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմինների ֆինանսավորման մասին

հազ.դրամ

h/h	**Բաժին**	**Խումբ**	**Դաս**	**Ծախսային ծրագրերի և այն կատարող ՀՀ պետա-կան կառավարման մար-մինների անվանումները**	**Տարեկան նախատեսված (ճշտված) պլան**	**Ֆինանսավորում 30.12.09թ. դրությամբ**	**Կատ. %**
				Ընդամենը	*370480,7*	*44470,8*	12,0
				ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	*349777,9*	*33778,1*	9,7
1	10	04	01	05. ՀՀ մանկական	37727,8	31162,1	82,6

				խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն			
2	10	04	01	18.ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում	4780,0	1850,0	38,7
3	10	06	01	04. ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարանների, կահույքի, կենցաղային սարքերի և սարքավորումների տրամադրում	301500,0		0,0
4	10	09	02	15. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում ծրագրի շրջանակներում	766,0	766,0	100,0
5	10	09	02	31.Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հեգեբանական վերականգնողական ծառայություններ	5004,1		0,0
				ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	*6000,0*	*3000,0*	50,0
6	10	09	02	26.Թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով բրոշուրների, տեղեկատվական թերթոնների մշակում և հրատարակում	6000,0	3000,0	50,0
				ՀՀ առողջապահության նախարարություն	*2200,0*	*0,0*	0,0
7	07	03	02	08.Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	2200,0	0,0	0,0
				ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	*12502,8*	*7692,7*	61,5
8	08	04	01	02.Երիտասարդության շրջանում մարդկանց շահա-	12502,8	7692,7	61,5

				գործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ քարոզարշավների կազմակերպում			
				ՀՀ Դատախազություն	*0,0*	*0,0*	
9	09	05	02	13.Վերապատրաստման ծառայություններ ծրագրի շրջանակներում	0,0	0,0	

"Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին" ՀՀ օրենքի N 1 հավելվածով թրաֆիքինգի դեմ պայքարի գծով ծախսերն ըստ առանձին ծրագրերի և դրանք իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմինների

հ/հ	**Բաժին**	**խումբ**	**դաս**	**Ծախսային ծրագրերի և այն կատարող ՀՀ պետական կառավարման մարմինների անվանումները**	**Գումարը (հազար դրամ)**	**ֆինանսավորում 15.12.2010թ. դրությամբ**	**Կատարման %**
				ԸՆԴԱՄԵՆԸ	***57433,5***	***38177,0***	***66,5***
				ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	***47233,5***	***37696,4***	***79,8***
1	**10**	**04**	**01**	05. ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն	36115,5	29011,8	80,3
2	**10**	**04**	**01**	17.ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում	4280,0	2950,0	68,9
3	**10**	**09**	**02**	13. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում ծրագրի շրջանակներում	766,0	766,0	100,0
4	**10**	**09**	**02**	26.Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հեգեբանական վերականգնողական ծառայություններ	6072,0	4968,6	81,8
				ՀՀ առողջապահության նախարարություն	***2200,0***	***0,0***	***0,0***
5	**07**	**03**	**02**	08.Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	2200,0	0,0	0,0

				ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	***8000,0***	***480,6***	***6,0***
6	**08**	**04**	**01**	02.Մարդկանց շահագործ-ման (թրաֆիքինգի) կան-խարգելմանն ուղղված քա-ռոզչական միջոցառումներ	8000,0	480,6	6,0

"Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին" ՀՀ օրենքի N 1 հավելվածով թրաֆիքինգի դեմ պայքարի գծով ծախսերն ըստ առանձին ծրագրերի և դրանք իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմինների

հ/հ	**Բաժին**	**խումբ**	**դաս**	**Ծախսային ծրագրերի և այն կատարող ՀՀ պետական կառավարման մարմինների անվանումները**	**Գումարը (հազար դրամ)**
				ԸՆԴԱՄԵՆԸ	***97055,8***
				ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	***73555,8***
1	**10**	**04**	**01**	05. ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն	**36115,5**
2	**10**	**04**	**01**	17. ՀՀ մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում	**3800,0**
3	**10**	**09**	**02**	13. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում ծրագրի շրջանակներում	**766,0**
4	**10**	**09**	**02**	26.Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ	**32874,3**
				ՀՀ առողջապահության նախարարություն	***2200,0***
5	**07**	**03**	**02**	08.Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	**2200,0**
				ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	***8000,0***
6	**08**	**04**	**01**	Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումներ	**8000,0**
				ՀՀ դատախազություն	***13300,0***
7	**09**	**05**	**02**	Վերապատրաստման ծառայություններ	**13300,0**

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում Եվրո/ՀՀ դրամ փոխարժեքն ընդունվել է 499.99:

Սկսած 2009 թվականից ՀՀ պետական բյուջեում նախատեսվում են ծախսեր թրաֆիքինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար: 2009 և 2010 թվականների համար այն կազմել է մոտ 33 000 եվրո յուրաքանչյուր տարվա համար: Ծրագիրը իրականացվում է ԱՄՔՈՐ հասարակական կազմակերպության հետ համատեղ: Աջակցությունը սկսվում է այն պահից, երբ անձը, համաձայն Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց Ազգային ուղղորդման կարգի նախնական նույնացվում է, որպես թրաֆիքինգի զոհ և ուղղորդվում է /իր համաձայնությամբ/ համապատասխան կառույց՝ աջակցություն ստանալու համար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը փոխհատուցում է ապաստարանի վարձակալման ծախսերը /տարեկան՝ 6 072 000 ՀՀ դրամ/, իսկ բոլոր մնացած ծախսերը ֆինանսավորվում են ԱՄՔՈՐ-ի լրացուցիչ աղբյուրներից:

Զոհի բուժօգնությունը կազմակերպվում է պետական պատվերի շրջանակներում, անվճար՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնորդությամբ՝ ՀՀ առողջապահության նախարարության միջոցով:

ՀՀ կառավարության 3 սեպտեմբերի 2010 թվականի N 1140-Ն որոշման համաձայն կատարվել է լրացում ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշման մեջ, այն է՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը լրացվել է շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանցով: Զոհի անձի վերաբերյալ գաղտնիությունը ապահովելու նպատակով նրանց ուղեգրումը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության ուղեգրով:

Պետական պատվերի հատկացվող ծավալները կախված են իրականացվող հետազոտությունների և բժշկական միջամտությունների ծավալից:

<u>Հարց 40:</u> Ինչպե՞ս է ներքին օրենսդրությամբ սահմանվում Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված վերականգնման և խորհրադածելու ժամկետը: Անհրաժեշտ է նշել վերականգման և խորհրադածելու ժամկետների նվազագույն և առավելագույն տևողությունը և կոնկրետ դեպքին հատուկ հանգամանքների պարագայում նշված ժամկետների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղայնացման խնդիրը:

Խորհրդածելու համար սահմանված ժամկետը 30 օր է, իսկ վերականգնման համար ժամկետը պայմանավորված է տրամադրվող աջակցության տեսակով և ծավալով:

<u>Հարց 41</u>: Ի՞նչ հիմքերի առկայության (անձնական իրավիճակ և (կամ) իրավապահ մարմինների հետ համագործակցություն) դեպքում է թրաֆիքինգի զոհին տրամադրվում Կոնվենցիայի 14-րդ հոդվածով նախատեսված կացության թույլտվություն: Նշել թրաֆիքինգի զոհերին տրվող կացության թույլտվության բոլոր տեսակները, դրանց նվազագույն ու առավելագույն ժամկետները և, առկայության դեպքում, երկարացման հիմքերը:

Կացության թույլտվությունը տրամադրվում է ընդհանուր հիմունքներով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր, մշտական և հատուկ կարգավիճակներ:

<u>Հարց 42:</u> Ինչպե՞ս է ներքին օրենսդրությամբ սահմանվում թրաֆիքինգի զոհերի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը: Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն, երկրի կողմից ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել թրաֆիքինգի զոհերի փոխհատուցումը երաշխավորելու ուղղությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թրաֆիքինգի տուժող ճանաչված անձը իրավունք ունի ներկայացնել քաղաքացիական հայց՝ հանցագործությամբ անմիջապես պատճառված վնասի հատուցման նպատակով:

<u>Հարց 43:</u> Նկարագրել թրաֆիքինգի զոհերի հայրենադարձության և վերադարձի գծով ներքին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգը:

Հայրենադարձության և վերադարձի ընթացակարգը նախատեսված է Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց ազգային կարգով, ինչպես նաև ՀՀ Կառավարության 24.03.2011թ. N.297-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ վերադարձի վկայականը տալու մասին>> կարգով:

<u>Հարց 44</u>: Արդյո՞ք որպես թրաֆիքինգի զոհ ձեր երկիր հայրենադարձված անձը շարունակում է պահպանել իր՝ թրաֆիքինգի զոհի կարգավիճակը: Նշել, թե ինչ հիմքով է ճանաչվում նման կարգավիճակը (օրինակ՝ զոհի հայտարարությունը): Հայրենադարձությունից հետո ինչպիսի' օգնություն է նախատեսված այդպիսի անձանց համար:

Այո:

Աջակցության փաթեթը նույնն է բոլոր զոհերի համար:

<u>Հարց 45:</u> Ի՞նչ հիմքով է դադարում թրաֆիքինգի զոհի կարգավիճակը.

- ***ոչ պատշաճ կերպով է հայցված զոհի կարգավիճակը,***
- ***զոհը հրաժարվում է համագործակցել համապատասխան մարմինների հետ,***
- ***ծագման երկիր վերադառնալու փաստը,***
- ***զոհի պահանջով,***
- ***նշել այլ հիմքեր:***

Թրաֆիքինգի զոհի կարգավիճակը դադարում է մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգով նախատեսված անհրաժեշտ աջակցության փաթեթը ստանալուց հետո կամ այն դեպքում, եթե հետաքննության, նախաքննության կամ դատաքննության ընթացքում պարզվում է, որ անձը թրաֆիքինգի չի ենթարկվել:

Բաժին II.3. Քրեական իրավունքի, հետաքննության, քրեական հետապնդման և դատավարության մասին օրենքների շրջանակներում ձեռնարկվող քայլեր

Այս բաժնում տեղ գտած հարցերը նպատակ ունեն վեր հանել տեղեկատվություն Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից ձեռնարկված այն քայլերի վերաբերյալ, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 4-րդ գլխով (18-26-րդ հոդվածներ) և վերաբերում են քրեական իրավունքին, ինչպես նաև Կոնվենցիայի 5-րդ գլխով (27-31-րդ հոդվածներ) նախատեսված այն քայլերի ձեռնարկմանը, որոնք վերաբերում են հետաքննության, քրեական հետապնդման և դատավարության մասին օրենքներին:

Հարցեր.

<u>Հարց 46:</u> Արդյո՞ք ներքին օրենսդրությամբ թրաֆիքինգի իրականացնելը համարվում է միայն մեկ հանցագործություն: Դրական պատասխանի դեպքում, օրենսդրական դրույթներն ներկայացնել անգլերեն կամ ֆրանսերեն թարգմանությամբ: Հակառակ պարագայում, նշել քրեական հանցագործությունների այն համակցությունը, որն առաջադրվում է թրաֆիքինգի դեպքերով քրեական հետապնդում իրականացնելիս և առնվազն ներառում է Կոնվենցիայի 4-րդ հոդվածով տրված թրաֆիքինգի սահմանմամբ նկարագրված բոլոր հանցավոր արարքները:

ԵԽ կոնվենցիայով սահմանված՝ մարդու թրաֆիքինգը, ինչպես նաև շահագործումը որպես հանցագործություն պատժվում են ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132.2-րդ հոդվածներով:

132-րդ հոդվածը վերաբերվում է չափահաս և գիտակից անձանց.

<<Հոդված 132. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը

1. Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ

դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձեւերով, առեւանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՝>>:

Իսկ 132.2-րդ հոդվածը՝ երեխային կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին.

<<Հոդված 132.2. Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը

1. Շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝>>:

<u>Հարց 47:</u> Արդյո՞ք Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն՝ ներքին օրենսդրությամբ քրեական հանցագործություն է համարվում թրաֆիքինգի զոհի ծառայություններից օգտվելը, եթե ծառայություններից օգտվողին հայտնի էր ծառայությունը մատուցողի՝ թրաֆիքինգի զոհ հանդիսանալու հանգամանքը:

Թրաֆիքինգի զոհի ծառայություններից օգտվելը պատժվում է ՀՀ քրեական օրենսգրքի 132.3-րդ հոդվածով /ուժի մեջ է մտել 09.04.2011թ./՝

<<Հոդված 132.3. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը

1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները>>:

<u>Հարց 48:</u> Արդյո՞ք Կոնվենցիայի 20-րդ հոդվածի 'գ' կետի համաձայն՝ ներքին օրենսդրությամբ քրեական հանցագործություն է համարվում մեկ այլ անձի ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթը դիտավորությամբ և թրաֆիքինգի իրականացման նպատակով պահելը, տեղափոխելը, թաքցնելը, վնասելը կամ ոչնչացնելը:

Անձի ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթը դիտավորությամբ և թրաֆիքինգի իրականացման նպատակով պահելը, տեղափոխելը, թաքցնելը, վնասելը կամ ոչնչացնելը ՀՀ ներքին օրենսդրությամբ նախատեսված չէ որպես առանձին հանցագործություն:

ՀՀ քրեական օրենսգրքի թրաֆիքինգի հոդվածների հատկանիշներով քննվող քրեական գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաճախ թրաֆիքինգի զոհերի համար խոցելի վիճակ է ստեղծվել հանցագործի կողմից վերջիններիս անձը հաստատող փաստաթուղթը վերցնելը կամ պահելը: Այդ հանգամանքը նախաքննական մարմնի կողմից գնահատվել է որպես թրաֆիքինգի իրականացման եղանակ:

ՀՀ քրեական օրենսգիրքը /հոդված 324/ պատասխանատվություն է նախատեսում միայն քաղաքացու անձնագիրը հափշտակելու համար, ինչը ընդհանուր հանցակազմ է և կապված չէ թրաֆիքինգի հետ:

<u>Հարց 49:</u> Արդյո՞ք Կոնվենցիայի համաձայն և 22-րդ հոդվածով նախատեսված արարքների դեպքում իրավաբանական անձինք կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության՝ ներքին օրենսդրությամբ սահանված կարգով:Նման արարքների դեպքում կազմակերպահրավական ինչպիսի± ձև ունեցող իրավաբանական անձինք կարող են ենթարկվել պատասխանատվության:

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ հանցագործության սուբյեկտ է հանդիսանում բացառապես ֆիզիկական անձը: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատության ինստիտուտ ՀՀ քրեական իրավունքում նախատեսված չէ:

<u>Հարց 50</u>: Ինչպիսի՞ պատժամիջոցներ են նախատեսված ներքին օրենսդրությամբ՝ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների համար: Մանրամասնել քրեական, քաղաքացիական և վարչական պատժամիջոցների տեսակները:

Կունվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների համար ՀՀ-ում սահմանված է քրեական պատասխանատվություն ՀՀ քրեական օրենգրքի 132-րդ, 132.2-րդև 132.3-րդ հոդվածներով:

Այն է.

<<Հոդված 132. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը>>

1. Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2.Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
3) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
6) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,
2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում, ինչպես նաև օրենսգրքի 132.2-րդ հոդվածում շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

5. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է իր կողմից կատարված ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել՝ իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:

<<Հոդված 132.2. Երեխաի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը>>

1. Շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպիս նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
3) պաշտոնեական դիրքը օգտագործելով,
4) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
5) առևանգման միջոցով,
6) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
7) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,
2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

<<Հոդված 132.3. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը>>

1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) ակնհայտ անչափահասի նկատմամբ,
2) հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ,
3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
4) երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

<u>Հարց 51:</u> Արդյո՞ք Կոնվենցիայով նախատեսված հանցանքների համար պատժամիջոցներ կիրառելիս ներքին օրենսդրությամբ հաշվի է առնվում անձի՝ մեկ այլ մասնակից պետության տարածքում նախկինում կատարած հանցագործության փաստը:

Այո, ՀՀ ներքին օրենսդրությանը համաձայն ՀՀ դատարանների կողմից պատժամիջոցներ կիրառելիս հաշվի են առնվում անձի կողմից նախկինում հանցագործություն կատարելու փաստը անկախ այն հանգամանքից, թե որտեղ է այն կատարվել:

<u>Հարց 52:</u> Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ ներքին օրենսդրությամբ ինչպե՞ս է նախատեսվում թրաֆիքինգի զոհի կատարած ապօրինի գործողությունների դեպքում պատժամիջոց չկիրառելու հնարավորությունը, եթե նման արարք գործելու համար վերջինիս նկատմամբ գործադրվել է հարկադրանք:

Թրաֆիքինգի զոհի կատարած ապօրինի գործողությունների դեպքում պատժամիջոց չկիրառելու հնարավորությունը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 5-րդ մասով՝

<<5. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է իր կողմից կատարված ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել՝ իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:>>:

Ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի համապատասխան դրույթներով /42-47 հոդվածներ/:

<u>Հարց 53:</u> Արդյո՞ք օրենսդրությունը նախատեսում է թրաֆիքինգի զոհի և (կամ) իրավասու մարմնի պաշտոնյայի (օրինակ՝ դատախազի) հայցադիմումի հիման վրա համապատասխան իրավական գործընթացի նախաձեռնման հնարավորություն:

Այո: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն հանցագործության մասին հաղորդումները ենթակա են պարտադիր քննարկման հետաքննական և նախաքննական մարմինների կողմից և դրանցում հանցագործության հատկանիշների առկայության դեպքում հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը պարտավոր են հարուցել քրեական գործ:

<u>Հարց 54:</u> Նկարագրել, թե ներքին օրենսդրությունն ի՞նչ հնարավորություն է ստեղծում թրաֆիքինգի զոհերին աջակցություն ցուցաբերող կամ օժանդակող ՀԿ-ների, միավորումների կամ խմբակցությունների համար՝ իրավական գործընթացներում մասնակցելու հարցում (օրինակ՝ որպես երրորդ կողմ):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն տուժողը կարող է լիազորել իր ներկայացուցչին քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնելու իր օրինական շահերը:

<u>Հարց 55:</u> Նկարագրել ներքին օրենսդրությամբ նախատեսված այն միջոցները, որոնք ուղղված են թրաֆիքինգի զոհի ինքնության և անվտանգության ապահովմանը՝ հետաքննության և իրավական գործընթացի ընթացքում, դրան նախորդող և հաջորդող ժամանակահատվածում:

Թրաֆիքինգի զոհն ունի այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք ՀՀ ներքին օրենսդրությամբ նախատեսված են տուժողի համար: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.1 հոդվածում թվարկված են քրեական դատավարությանը մասնակցող անձանց բոլոր պաշտպանական միջոցները: Մասնավորապես,

1. անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում, 2. պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, 3. պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, 4. պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը, 5. վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը, 6. պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը, 7. կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը, 8. պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, 9. պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը, 10.պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը, 11. դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը, 12. դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

III. Թրաֆիքինգի վիճակագրություն

Հոդված	Աղյուսակ 1. Թրաֆիքինգի զոհեր	2008			
		Կանայք	Տղամարդիկ	Երեխաներ	Ընդամենը
Թ1	Տարվա ընթացքում նույնացված[3] զոհերի թիվը	31	-	3	34
Թ2	Նույնացված թրաֆիքինգի զոհերի շահագործման				
	- սեռական շահագործում	31	-	-	31
	- հարկադիր աշխատանքներ և ծառայություններ	-	-	3	3
	- ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակ	-	-	-	-
	- տնային աշխատանքներ	-	-	-	-
	- օրգանների հեռացում	-	-	-	-
	- այլ ձևեր՝ նշել	-	-	-	-
Թ3	Իրավասու մարմինների հիմնավոր կարծիքով				
	- ազգային թրաֆիքինգ	-	-	3	3
	- անդրազգային թրաֆիքինգ	31	-	-	31
	12-րդ հոդված՝ զոհերին աջակցության ցուցաբերում				
Թ4	Որևէ տեսակի աջակցություն ստացած	20	-	4	24
Թ5	Առաջարկված աջակցությունից հրաժարված թրաֆիքինգի զոհերի թիվը	1			1
Թ6	Թրաֆիքինգի զոհերի համար երկրում առկա				2

[3] ‘նույնացված’ բառը կիրառվում է Կոնվենցիայում նշված իմաստով

Թ7	Թրաֆիքինգի զոհերի կացարաններում առկա տեղերի ընդհանուր թիվը				13
Թ8	Կացարաններում տեղավորված թրաֆիքինգի զոհերի ընդհանուր թիվը	13		4	17
Թ9	Թրաֆիքինգի զոհերի (ներառյալ՝ իրավասու մարմինների հիմնավոր կարծիքով այդպիսին հանդիսացած անձինք) թիվը, որոնց տրամադրվել է վերականգնման և խորհրդատվելու				
Թ10	Կացության թույլտվություն ստացած թրաֆիքինգի				
	- անձնական իրավիճակով պայմանավորված				
	- իրավապահ մարմինների հետ				
Թ11	Փոխհատուցում ստացած թրաֆիքինգի զոհերի				
Թ12	Թրաֆիքինգի զոհերին փոխհատուցված գումարը				
	- Թրաֆիքինգի մեկ զոհին փոխհատուցված նվազագույն գումար (եվրոյով)				
	- Թրաֆիքինգի մեկ զոհին փոխհատուցված				
	16-րդ հոդված՝ զոհերի հայրենադարձություն և				
Թ13	Երկիր հայրենադարձած թրաֆիքինգի զոհերի թիվը				
Թ14	Ձեր երկրից այլ երկիր հայրենադարձած թրաֆիքինգի զոհերի թիվը				

Հարց	Աղյուսակ 2. Իրավական գործընթացներ և պատժամիջոցներ	**2008**
Թ15	Թրաֆիքինգի դեպքերով հարուցված քրեական գործընթացների ընդհանուր թիվը	13
Թ16	Թրաֆիքինգի գծով դատարանի վճիռների թիվը	4
Թ17	Թրաֆիքինգի զոհի ծառայություններից օգտվելու գծով դատարանի վճիռների թիվը	
Թ18	Թրաֆիքինգի գծով կայացված դատարանի վճիռների թիվը՝ ազատազրկման կիրառմամբ	4
Թ19	Թրաֆիքինգի հիմքով կիրառված ազատազրկման ժամկետները	
	- նվազագույն ժամկետ	2
	- առավելագույն ժամկետ	7.6
Թ20	Ակտիվների բռնագանձմանը հանգեցրած դատավարությունների թիվը	
Թ21	Թրաֆիքինգի նպատակով օգտագործված իրավաբանական անձի կամ գործունեության դադարեցմանը հանգեցրած դատավարությունների թիվը	
Թ22	Պատիժ չկիրառելու հնարավորությունից օգտված թրաֆիքինգի զոհերի թիվը	

Հաց	Աղյուսակ 3. ՄԹ զոհերի զագման երկրները		**2008**
Â23			
	- Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ	Ադրբեջան	
		Ալբանիա	
		Անդորա	
		Ավստրիա	
		Բելգիա	
		Բոսնիա և Հերցեգովինա	
		Բուլղարիա	
		Գերմանիա	
		Դանիա	
		Էստոնիա	
		Թուրքիա	
		Իռլանդիա	
		Իսլանդիա	
		Իսպանիա	
		Իտալիա	
		Լատվիա	
		Լեհաստան	
		Լիխտենշտեյն	
		Լիտվա	
		Լյուքսեմբուրգ	
		Խորվաթիա	
		Կիպրոս	
		Հայաստան	**21**
		Հունաստան	
		Հունգարիա	
		Մալթա	
		Մակեդոնիա	
		Մեծ Բրիտանիա	
		Մոլդովա	
		Մոնակո	
		Մոնտենեգրո	
		Նիդերլանդներ	
		Նորվեգիա	
		Շվեդիա	
		Շվեյցարիա	

		Չեխիա	
		Պորտուգալիա	
		Ռումինիա	
		Ռուսաստան	**13**
		Սան Մարինո	
		Սերբիա	
		Սլովակիա	
		Սլովենիա	
		Վրաստան	
		Ուկրաինա	
		Ֆինլանդիա	
		Ֆրանսիա	
	- այլ երկրներ		

III. Թրաֆիքինգի վիճակագրություն

Հարց	Աղյուսակ 1. Թրաֆիքինգի զոհեր	2009				2010			
		Կանայք	Տղամարդիկ	Երեխաներ[1]	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ	Երեխաներ[4]	Ընդամենը
	10-րդ հոդված՝ զոհերի նույնացում								
Թ1	Տարվա ընթացքում նույնացված[5] զոհերի թիվը	4	13	5	60	16	-	3	19
Թ2	Նույնացված թրաֆիքինգի զոհերի շահագործման ձևերը								
	- սեռական շահագործում	3	-	-	39	16	-	3	19
	- հարկադիր աշխատանքներ և	3	13	5	21	-	-	-	-
	- ստրկության կամ ստրկությանը նմանվող	-	-	-	-	-	-	-	-
	- տնային աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-
	- օրգանների հեռացում	-	-	-	-	-	-	-	-
	- այլ ձևեր՝ նշել	-	-	-	-	-	-	-	-
Թ3	Իրավասու մարմինների հիմնավոր կարծիքով հետևյալ բնույթի թրաֆիքինգի զոհերի թիվը								
	- ազգային թրաֆիքինգ	1	-	5	6	7	-	2	9
	- անդրազգային թրաֆիքինգ	41	13	-	54	9	-	1	10
	12-րդ հոդված՝ զոհերին աջակցության								

[4] երեխաներ են համարվում տասնութ տարին չլրացած բոլոր անձինք (Կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝դ՝կետ)

[5]՝նույնացված՝բառը կիրառվում է Կոնվենցիայում նշված իմաստով

Թ4	Որևէ տեսակի աջակցություն ստացած թրաֆիքինգի զոհերի թիվը	12	9	7	28	15	-	1	16
Թ5	Առաջարկված աջակցությունից հրաժարված թրաֆիքինգի զոհերի թիվը	1			1	1			1
Թ6	Թրաֆիքինգի զոհերի համար երկրում առկա կացարանների թիվը				2				2
Թ7	Թրաֆիքինգի զոհերի կացարաններում առկա տեղերի ընդհանուր թիվը				13				13
Թ8	Կացարաններում տեղավորված թրաֆիքինգի զոհերի ընդհանուր թիվը	9	5	7	21	14	-	1	15
	13-րդ հոդված՝ վերականգնման և խորհրդածության ժամանակահատված								
Թ9	Թրաֆիքինգի զոհերի (ներառյալ՝ իրավասու մարմինների հիմնավոր կարծիքով այդպիսին հանդիսացած անձինք) թիվը, որոնց տրամադրվել է վերականգնման և խորհրադածելու								
	14-րդ հոդված՝ զոհերին աջակցության ցուցաբերում								
Թ10	Կացության թույլտվություն ստացած թրաֆիքինգի զոհերի թիվը								
	- անձնական իրավիճակով պայմանավորված								
	- իրավապահ մարմինների հետ								
	15-րդ հոդված՝ փոխհատուցում և իրավական վերականգնում								
Թ11	Փոխհատուցում ստացած թրաֆիքինգի զոհերի								
Թ12	Թրաֆիքինգի զոհերին փոխհատուցված գումարը								
	- Թրաֆիքինգի մեկ զոհին փոխհատուցված նվազագույն գումար (եվրոյով)								
	- Թրաֆիքինգի մեկ զոհին փոխհատուցված								
	16-րդ հոդված՝ զոհերի հայրենադարձություն և								
Թ13	Երկիր հայրենադարձած թրաֆիքինգի զոհերի								
Թ14	Ձեր երկրից այլ երկիր հայրենադարձած թրաֆիքինգի զոհերի թիվը								

Հարց	Աղյուսակ 2. Իրավական գործընթացներ և պատժամիջոցներ	2009	2010
	18-րդ հոդված՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) քրեականացում		
Թ15	Թրաֆիքինգի դեպքերով հարուցված քրեական գործընթացների ընդհանուր թիվը	15	15
Թ16	Թրաֆիքինգի գծով դատարանի վճիռների թիվը	11	4
Թ17	19-րդ հոդված՝ զոհի ծառայություններից օգտվելու քրեականացումը		
	Թրաֆիքինգի զոհի ծառայություններից օգտվելու գծով դատարանի վճիռների թիվը		

	23-րդ հոդված՝ պատժամիջոցներ և ներգործության միջոցներ		
Թ18	Թրաֆիքինգի գծով կայացված դատարանի վճիռների թիվը՝ ազատազրկման կիրառմամբ	-	-
Թ19	Թրաֆիքինգի հիմքով կիրառված ազատազրկման ժամկետները		
	- նվազագույն ժամկետ	3	3
	- առավելագույն ժամկետ	13	9.6
Թ20	Ակտիվների բռնագանձմանը հանգեցրած դատավարությունների թիվը	-	-
Թ21	Թրաֆիքինգի նպատակով օգտագործված իրավաբանական անձի կամ գործունեության դադարեցմանը հանգեցրած դատավարությունների թիվը		
	26-րդ հոդված՝ պատիժ չկիրառելու հնարավորություն		
Թ22	Պատիժ չկիրառելու հնարավորությունից օգտված թրաֆիքինգի զոհերի թիվը		

Հարց	Աղյուսակ 3. ՄԹ զոհերի ծագման երկրները		2009	2010
Â23	Ծագումով հետևյալ երկրներից թրաֆիքինգի զոհերի թիվը			
	- Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ	Ադրբեջան		
		Ալբանիա		
		Անդորա		
		Ավստրիա		
		Բելգիա		
		Բոսնիա և Հերցեգովինա		
		Բուլղարիա		
		Գերմանիա		
		Դանիա		
		Էստոնիա		
		Թուրքիա		
		Իռլանդիա		
		Իսլանդիա		
		Իսպանիա		
		Իտալիա		
		Լատվիա		
		Լեհաստան		
		Լիխտենշտեյն		

		Լիտվա		
		Լյուքսեմբուրգ		
		Խորվաթիա		
		Կիպրոս		
		Հայաստան	49	19
		Հունաստան		
		Հունգարիա		
		Մալթա		
		Մակեդոնիա		
		Մեծ Բրիտանիա		
		Մոլդովա		
		Մոնակո		
		Մոնտենեգրո		
		Նիդերլանդներ		
		Նորվեգիա		
		Շվեդիա		
		Շվեյցարիա		
		Չեխիա		
		Պորտուգալիա		
		Ռումինիա		
		Ռուսաստան	11	1
		Սան Մարինո		
		Սերբիա		
		Սլովակիա		
		Սլովենիա		
		Վրաստան		
		Ուկրաինա		
		Ֆինլանդիա		
		Ֆրանսիա		
	- այլ երկրներ			